18 ՕԳՈՍՏՈՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 143(4761)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Լավ, ի՞նչ են ուզում

## *Խորհուրդներ Ռաուֆ Միրկադիրովին*

**Իլհամ Ալիեւը չի մասնակցի ԱՊՀ 20-ամյակի գագաթաժողովին: Ըստ ադրբեջանցի վերլուծաբան Ռաուֆ Միրկադիրովի, չնայած Ադրբեջանի նախագահը չի մերժել հրավերը, եւ գագաթաժողովին ներկա կլինի վարչապետ Արթուր Ռասիզադեն, բայց այն, որ նա անձամբ չի մեկնում, վկայում է, որ «պաշտոնական Բաքուն Մոսկվայից դժգոհ է»:**

**Միրկադիրովն, իհարկե, պետք է տեղյակ լինի, որ ԱՊՀ-ին Ադրբեջանի անդամակցությունն սկսվում է 1993 թվականից: Ուստի ծրագրված գագաթաժողովը Բաքվի համար բոլորովին էլ հոբելյանական չէ: Եվ, առհասարակ, Ադրբեջանն այդ կազմակերպությանն անդամակցել է իրավիճակի պարտադրանքով: Եվ այն, որ ԱՊՀ-ին անդամակցելուց մի քանի ամիս անց Մոսկվայի ուղղակի եւ բավական «ագրեսիվ» միջնորդությամբ Ղարաբաղյան ճակատում հասել է զինադադարի, այդքանով Ադրբեջանը պետք է իրեն կապված համարի մի կառույցի, որտեղ «առաջին ջութակ» է Ռուսաստանը:**

**Բայց, ինչպես ասում են, «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում է»: Այսօր, եթե հիմնվելու լինենք իշխող «Նոր Ազարբայջան» կուսակցության ոչ երկրորդական դեմք եւ քաղաքագետի համարում ունեցող Մուբարիզ Գուրբանլիի կարծիքի հիման վրա, Բաքվում գտնում են, որ Ռուսաստանը «կարող է ավելին անել»: Այլ կերպ ասած, Ադրբեջանի իշխող վերնախավն այն կարծիքին է, որ «Մոսկվան պիտի Հայաստանին պարտադրի ընդունել ադրբեջանական «ուղղումները», բայց չի անում»:**

**Ռուսներն ասում են՝ «մահակը երկու ծայր ունի»: Այսինքն, նույն կերպ կարելի է ասել, որ «Մոսկվան կարող է Բաքվին պարտադրել, որ ճանաչի ԼՂ անկախությունը, բայց չի անում»: Եվ երբ հայկական կողմերից նման հնչեցում չի հետեւում, Բաքվում կարծում են, թե «Ռուսաստանի հետ հայերն այդ լեզվով չեն համարձակվի խոսել»: Ընդ որում, այդ «ենթաթեզի» վրա էլ սեփական դատողությունները կառուցում են թե՛ Մուբարիզ Գուրբանլին, թե՛ վերլուծաբան Միրկադիրովը: Այլ շրջանակների մասին խոսել իսկ չարժե:**

**Ըստ երեւույթին, Բաքվի «քաղտեխնոլոգները» մի պարզունակ կաղապար են մշակել: Թերեւս՝ Իլհամ Ալիեւի աշխատակազմի հանձնարարականով: Դրա իմաստը «Մեդվեդեւին «թասիբի գցելն» է»: Ուղղակի ակնարկվում է, որ ՌԴ նախագահը «կարող է վճարել սեփական հեղինակությամբ»: Որ սա շատ «միամիտ» հնարանք է, կարելի է ապացուցել բանակցությունների նախորդ փուլերի օրինակներով. ոչ ոք Ֆրանսիայի նախագահին «հեղինակություն կորցնելու» մասին չի հիշեցրել, երբ Ռամբուեւում կողմերը համաձայնության չեն եկել: Ավելի վաղ տապալվել է ԱՄՆ նախաձեռնությունը: Ռուսաստանի փորձն, այսպիսով, երրորդն է: Ընդ որում, շատ ավելի արդյունավետ, քան նախորդ երկուսը: Ոչ ոք Ֆրանսիայի գործող նախագահի եւ նախագահի ամենահավանական թեկնածու Սարկոզիին այսօր չի հիշեցնում, որ վրացական ճգնաժամին իր միջնորդությունն ըստ էության ձախողված է: Այնպես որ, Մեդվեդեւը ոչինչ չի կորցնում, երբ Կազանում Իլհամ Ալիեւը, ինչպես «Իզվեստիա»-ին ասել է ՌԴ ԱԳՆ-ի անանուն աղբյուրը, «հետընթաց է տալիս»:**

**Կարգավորման նախաձեռնության տապալումից չի շահում միայն Ադրբեջանը: Եթե, իհարկե, հավատանք, որ հենց «ամենաշատն Ադրբեջանն է ցանկանում, որ հարցը լուծվի»: Իսկ եթե Իլհամ Ալիեւը պարզապես ներկա փուլում հարցեր կարգավորելու մտադրություն չունի, ինչն, ի դեպ, շատ ավելի հավանական է, որովհետեւ նա ասում է, որ «հինգ կամ տասը տարի հետո Ադրբեջանն ավելի ուժեղ է լինելու», ապա ստացվում է, որ վերլուծաբան Միրկադիրովը պետք է դժգոհ լինի միայն իր երկրի նախագահից: Կամ գովի նրան «դիվանագիտական ճարպկության» համար եւ հավատա, որ Իլհամ Ալիեւի նշած ոչ այնքան հեռու ժամկետում հարցը «լուծվելու է բացառապես ադրբեջանական նախաձեռնությամբ»:**

**Այլ բան, եթե նա Իլհամ Ալիեւի «պայծառատեսությանը» կասկածում է կամ չի հավատում ընդհանրապես: Այսինքն, չի կարծում, որ «հինգ կամ տասը տարի հետո Ադրբեջանն այնքան ուժեղ է լինելու, որ կամք է թելադրելու»: Այդ դեպքում «սարուձոր ընկնելու» փոխարեն Միրկադիրովն ու մյուսները պիտի այդքանը բարձրաձայնեն եւ ներադրբեջանական բանավեճ սկսեն՝ պարզելու համար, թե ի՞նչ հեռանկար կա հավատալու Իլհամ Ալիեւին: Իսկ առհասարակ, երեւի, Իլհամ Ալիեւը ԱՊՀ գագաթաժողովին չմասնակցելու զուտ անձնական պատճառ էլ ունի. սեպտեմբերի 2-ին, ամենայն հավանականությամբ նա կմեկնի Նախիջեւան՝ նշելու հոր՝ Հեյդար Ալիեւի «քաղաքական վերածննդի» հոբելյանը: Քսան տարի առաջ այդ օրն է նա ընտրվել Նախիջեւանի ԻՀ Գերագույն մեջլիսի նախագահ: Եվ այստեղ հարկ է վերջին խորհուրդը տալ Ռաուֆ Միրկադիրովին. Իլհամ Ալիեւի որոշումներում աշխարհաքաղաքական իմաստ որոնելուց առաջ պետք է լավ իմանալ ոչ այնքան հեռավոր անցյալը: Չէ՞ որ, ի վերջո, սեպտեմբերի 2-ը նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման օրն է:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Դրամն արժեւորվել է, դոլարայնացումը՝ նվազել

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այս տարվա մարտ-ապրիլին դրամի կտրուկ արժեզրկման եւ մեր տնտեսության դոլարայնացման մակարդակի որոշակի բարձրացմանն անդրադարձել էինք «Դրամը աստիճանաբա՞ր արժեզրկվեց» («**Ազգ**», 14 մայիսի 2011թ) հրապարակման մեջ: Նշել էինք, որ դրա հիմնական պատճառը երկրի նախագահ Սերժ Սարգսյանի մարտի 11-ի հրապարակային հայտարարությունն էր, որ մենք ունենալու ենք դրամի «դանդաղ եւ կայուն» արժեզրկում: Փաստը, որ անգամ այդ ամիսներին իրանցի զբոսաշրջիկների կտրուկ հոսքը Հայաստան եւ դրա արդյունքում դոլարի ներհոսքը չփոխեցին դրամի արժեզրկման ընդհանուր միտումը, եւս մեկ վկայությունն էր, որ այդ գործընթացը պայմանավորված էր նախագահի ելույթով եւ դրանից առաջացած սպասումներով:



Միաժամանակ, վկայակոչելով ԿԲ-ի հրապարակած տեղեկատվությունը, ներկայացրել էինք տնտեսության դոլարայնացման մակարդակի բարձրացմանը վերաբերող ցուցանիշներն այս տարվա առաջին եռամսյակում, հավանական համարելով, որ նախագահի հայտարարության ազդեցությամբ այդ միտումը կշարունակվի հաջորդող ամիսներին եւս:

Այդուհանդերձ, բացառելով Սերժ Սարգսյանի հայտարարությամբ պայմանավորված սուբյեկտիվ գործոնը, նշել էինք, որ առաջիկայում, մի շարք գործոններով պայմանավորված (գյուղմթերքների սեզոն, արտարժույթի ներհոսքի ավելացում արտերկրից, աշխարհում դոլարի դիրքերի թուլացում, ԿԲ-ի կողմից գնաճի զսպման նպատակով դրամավարկային քաղաքականության կոշտացում, պարտադիր պահուստավորման նորմատիվներում կատարված փոփոխություն եւ այլն) դրամը ոչ թե կարժեզրկվի, այլ կարժեւորվի:

*Տես էջ 2*

# Հասարակական հսկիչ կամ կրոնական ոստիկանություն

## *Իսկ եկեղեցին չի պայքարելու իր «մոլորյալ զավակների» դեմ*

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Մի քանի ամիս առաջ Հայաստանի Հանրապետության քաղաքացին Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) շահեց դատը՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության: ՄԻԵԴ-ը վճռել էր, որ ՀՀ-ն խախտել է քաղաքացու, ավելի արդարացի լինելու համար նկատենք՝ մարդու իրավունքը, որը, ելնելով իր կրոնական հայացքներից, հրաժարվել էր ծառայել հայկական բանակում: Ըստ այդմ՝ քաղաքացին իր իսկ պետությունից ստացավ մի քանի հազար եվրո փոխհատուցում: Պարզվեց, որ քաղաքացին «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությունից է, սա հաստատեցին տվյալ կազմակերպության ներկայացուցիչների ստորագրությունները՝ այն հաղորդագրության տակ, որտեղ նշվում էր ՄԻԵԴ-ի վճռի մասին: Այժմ մեկ դիտարկում. այդ ի՞նչ «մարդու իրավունք» է խախտել ՀՀ-ն, որի սահմանադրությունը ամրագրում է, որ երկրում արական սեռի բոլոր քաղաքացիների համար սահմանված է պարտադիր զինվորական ծառայություն, այն նույն ՀՀ-ն, որի սահմանները շարունակվում են մնալ անհանգիստ, որտեղ ժամանակ առ ժամանակ լինում են հակառակ կողմից կրակոցներ, եւ որը գտնվում է կիսապատերազմական վիճակում: Ասենք, ինչո՞ւ, երբ բանակ է զորակոչվում, օրինակ, ոմն Այվազյան Նորայր, այստեղ ՀՀ-ն «մարդու իրավունքներ» չի խախտում, բայց խախտում է, երբ բանակ է զորակոչում մեկ այլ Այվազյան Նորայրի, որը Եհովայի վկա է: Համաձայն Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի՝ ամեն ոք ունի խղճի, դավանանքի եւ խոսքի ազատություն: Հենց այս սկզբունքի հիման վրա, ուրեմն, արական սեռի ՀՀ բոլոր քաղաքացիները, որոնք զորակոչի տարիքում են, կարող են կանգնել ու ասել՝ մենք չենք ուզում ծառայել բանակում, քանի որ դա թույլ չի տալիս մեզ մեր դավանանքը, նույն սկզբունքի համաձայն՝ ՀՀ-ն, իր սահմանադրությամբ հանդերձ, ոչինչ անել չի կարող:

*Տես էջ 3*

# «Ժառանգությունն» առաջարկում է կրպակների ապամոնտաժման խնդրով խորհրդարանական լսումներ

**Երեկ «Ժառանգություն» կուսակցության խորհրդարանական խմբակցությունը պաշտոնապես դիմեց ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին, Ազգային ժողովի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Մարգարյանին, մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արամ Սաֆարյանին, պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանին, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանին, պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանին, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանին՝ առաջարկելով հաջորդ շաբաթ Երեւան քաղաքում կրպակների ապամոնտաժման խնդրով խորհրդարանական լսումներ հրավիրել:**

Ս. Խ.

# ԱԳ նախարարը մեկնում է Ավստրիա

**Արտգործնախարարության լրատվական ծառայության փոխանցմամբ՝ նախարար Էդվարդ Նալբանդյանն Ավստրիայի փոխվարչապետ, ԱԳ նախարար Միխայել Շպինդելեգերի հրավերով օգոստոսի 18-19-ին Զալցբուրգում կմասնակցի «Աշխարհի տնտեսության եւ համաշխարհային կառավարման համար նոր հիմքեր» խորագիրը կրող 2011 թվականի ֆորումին, որին այս տարի հրավիրված են նաեւ ԵՄ «Արեւելյան գործընկերություն» ծրագրի անդամ երկրների արտգործնախարարները:**

# Ադրբեջանը երեխաների մահը շահարկում է նաեւ ՄԱԿ-ում

«Ցավում եմ, որ ադրբեջանական կողմը շարունակում է ՄԱԿ-ում եւ միջազգային այլ կազմակերպություններում իրեն ներկայացնել որպես «ագրեսիայի» զոհ, առանց երբեւէ խոստովանելու կամ ազնվորեն փաստելու իր դերը Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ ռազմական ագրեսիա սանձազերծելու գործում», օգոստոսի 4-ով թվագրված նամակում այսպիսի բովանդակությամբ է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունին դիմել ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ **Կարեն Նազարյանը**:

Օգոստոսի 17-ին ՄԱԿ-ում որպես պաշտոնական փաստաթուղթ տարածված այս նամակով Հայաստանի ներկայացուցիչը, ըստ ՀՀ ԱԳՆ հաղորդագրության, անդրադարձել է հուլիսի 26-ով թվագրվող մի փաստաթղթի, որ պարունակում է ՄԱԿ-ում Ադրբեջանի ներկայացուցչի նամակը, որում հայկական կողմը մեղադրվում է «պայթուցիկ սարքի» զոհ դարձած 13-ամյա երեխայի մահվան մեջ:

«Այս մեղադրանքի հեղինակներն անկախ հետաքննություն անցկացնելու հնարավորություն չեն ընձեռել նման սարսափելի պնդումների ճշմարտացիությունը ստուգելու եւ դրա մանրամասները պարզելու համար: Նմանապես հայտարարություններն ադրբեջանական դիվանագիտության կողմից օգտագործվում են ստանձնած պարտավորություններից խուսափելու համար», իր նամակում նշել է Կարեն Նազարյանը: ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցիչը հիշեցրել է, որ հենց այս պատրվակով Ադրբեջանը փորձ ձեռնարկեց դուրս գալու հրադադարի խախտումների հետաքննության մեխանիզմի ստեղծման համաձայնությունից, որն ընդունվել էր 2011թ. մարտի 2-ին Սոչիում տեղի ունեցած նախագահների հանդիպման արդյունքում:

Նազարյանն անբարոյական է որակել «շրջանառության մեջ դնել նման զրպարտչական փաստաթուղթ եւ որպես քարոզչական գործիք շահագործել անմեղ երեխայի մահը», ընդգծմամբ, որ Ադրբեջանին պետք է հիշեցվեն 1991-1994թթ. իրողությունները: Ըստ այդմ, այդ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ ուղղված ագրեսիայի եւ պատերազմի հետեւանքով Ադրբեջանը լրջորեն աղտոտել է Հայաստանին սահմանակից շրջանները եւ հակամարտության գոտում գտնվող տարածքներն ականներով, զինամթերքի եւ պատերազմական պայթուցիկ մնացորդների կուտակումներով:

Ադրբեջանը, ըստ նամակում արված հիշեցմամբ, շարունակում է լրջորեն խոչընդոտել ականազերծման հեղինակավոր «HALO Trust» բարեգործական կազմակերպության գործունեությանը՝ այդ առաքելությունը որակելով որպես «անօրինական գործողություններ»:

«Այն փաստը, որ անկախ հետաքննություն չի իրականացվել, եւ Ադրբեջանը խուսափում է հրադադարի խախտումների առնչությամբ հետաքննական մեխանիզմներ հաստատելուց, բացահայտում է, թե ով է կանգնած այդ խախտումների եւ կեղծ մեղադրանքների հետեւում», Բան Կի Մունին ուղղված նամակում նշել է Կարեն Նազարյանը:

Ա.Հ.

# ՀՌԱԿ-ը եւ նրա անշարժ գույքի դառն ճակատագիրը

Քանիցս առիթ ենք ունեցել հաստատելու, որ ՀՌԱԿ-ում անցյալ հունվար ամսից ի վեր տիրող տարօրինակ իրավիճակի՝ հրաժարումների, «ընտրությունների», իսկ վերջերս նաեւ՝ «հեղաշրջման» եւ վտարումների բուն պատճառը, որքան էլ որ Հարութ Առաքելյանը եւ Էդվարդ Անտինյանը ներկայացնեն իբրեւ «սկզբունքային» հակամարտության արդյունք, ունի շա՜տ տրիվիալ պատճառներ, որոնցից մեկը փո՛ղն է: Իսկ քանի որ կուսակցությունը չունի հինչուն փող, ապա Հարութը, իր անմիջական գործակիցների՝ փոխատենապետ եւ կաուչուկի գործով իր գործընկեր Վանո Գրիգորյանի եւ, հատկապես, ատենադպիր եւ իր կամակատար Կարեն Կակոյանի մեղսակցությամբ, կուսակցության ղեկավարի աթոռին ինչ-ինչ հանգամանքներով տիրանալուց անմիջապես հետո որոշել էր շտապ կարգով հարստանալ եւ կուսակցության նախկին ղեկավարության ջանքերով ձեռք բերված անշարժ գույքը՝ Նոր Հաճընի, Արտաշատի, Եղվարդի, Գորիսի եւ Վանաձորի գրասենյակները վաճառել: Միաժամանակ հայհոյելով թե՛ նախկին ղեկավարությանը եւ թե՛ այն բարերարներին, որոնց նվիրատվությամբ էլ մինչեւ 2003 թ. ՀՌԱԿ-ը տեր էր դարձել այդ գրասենյակներին: Ի դեպ, բոլոր այդ գործարքները, ըստ մեր տվյալների, տեղի են ունեցել ՌԱԿ այսպես կոչված կենտրոնական վարչության ատենապետ Մայք Խարապյանի եւ նրա համախոհների քաջալերանքով, որպեսզի ձերբազատվեն Հարութի ուզվորությունից ու նվնվոցներից:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
DEMOCRATIC LIBERAL (RAMGAVAR) PARTY OF ARMENIA
REPUBLIC COMMITTEE
Քաղվածք
Որոշում է


ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Այս մասին երեկ, «Հայկական ժամանակ» օրաթերթում, իրեն հատուկ գռեհիկ արտահայտություններով, հանդես է եկել Հարութը ինքնախոստովանական արժեք ներկայացնող հայտարարությամբ: Պատասխանելով թղթակցի՝ «ձեր հասցեին կուսակցության գրասենյակները ապօրինի կերպով օտարելու մեղադրանքներ են հնչում: Ի՞նչ կասեք այդ մասին» հարցմանը, Հարութն ասել է. «Եթե կարող են ինձ դատել, թող դատեն: Ես չեմ կարող վաճառել մի բան, որն իմը չէ»: Այսինքն վերջինս կուսակցության սեփականությունը համարում է իրենը եւ փորձում է հարստանալ ուրիշների կողմից ոչ թե իրեն, այլ կուսակցությանը նվիրած գույքով: Ըստ մեր հաշվարկների՝ այդ գույքը վաճառվել եւ, ընդհանուր առմամբ հափշտակվել է մոտ 150 հազար դոլար գումար: Շարունակելով իր ինքնախոստովանանքը՝ Հարութը նշել է. «Եթե սա Հանրապետական վարչությանն է պատկանում, Հանրապետական վարչությունը որոշել է օտարել, նվիրել կամ վաճառել. ըստ «Քաղաքացիական օրենքի»՝ սեփականատերն ինչ ուզում, անում է»: Ի դեպ, ըստ կուսակցությունների մասին գործող օրենքի՝ կուսակցությունները կարող են օտարել իրենց գույքը միայն ինքնալուծարման դեպքում: Նշենք նաեւ, որ ՀՌԱԿ կանոնադրությամբ նույնպես նախատեսված չէ գույքի նվիրաբերում, հետեւաբար ՀՌԱԿ նախկին ատենապետը խախտել է ոչ միայն կուսակցության կանոնադրությունը, այլեւ Հայաստանի Հանրապետության օրենքը: Ավելացնենք միայն, որ այսպես կոչված «նվիրաբերում» օպերացիան կատարվել է Կարեն Կակոյանի եւ Վանո Գրիգորյանի մեղսակցությամբ, ինչը ապացուցող փաստաթուղթը ներկայացնում ենք: Մեր ունեցած տեղեկություններով՝ ՀՌԱԿ վարչության անդամների ճնշող մեծամասնությունը տեղյակ չի եղել այս գործարքից, հետեւաբար կարելի է կարծել, որ կատարվել է նաեւ փաստաթղթերի կեղծում, իսկ հայտարարելով, որ «վարչությունը տեղյակ է», Հարութը փորձում է իր մութ գործարքի մեջ ներքաշել ՀՌԱԿ Հանրապետական ողջ վարչության իր ընկերներին նույնպես:

Կարծում ենք, որ վերջին հեղաշրջման այս փորձի նպատակն է կոծկել անշարժ գույքի շուրջը կատարված ապօրինությունները, քանի որ Էդվարդ Անտինյանը այս հարցը արդեն բարձրացրել էր, իսկ ՀՌԱԿ անդամներից մեկը դիմել էր դատախազություն՝ խնդրելով սկսել հետաքննություն՝ հղում անելով կուսակցության անշարժ գույքի վերաբերյալ «**Ազգի**» հրապարակումներին:

**Ռ. Ա.**

**Փաստաթուղթ 1**

**Քաղվածք՝ ՀՌԱԿ Հանրապետական Վարչության որոշումից**

**29.01.2009 թ. (հունվարի քսանինը երկու հազար ինը թվականի) կայացած ՀՌԱԿ Հանրապետական վարչության որոշման արձանագրությունից:**

**Հաշվի առնելով Պարգեւ Պավլեի Դավթյանի Վանաձորի քաղաքի երկարամյա կուսակցական շինարարության օրինակելի գործունեությունը, ՀՌԱԿ Հանրապետական Վարչությունը**

**Որոշում է**

**1. ՀՌԱԿ սեփականությունը հանդիսացող Լոռու մարզի Վանաձորի քաղաքի Տիգրան Մեծ փողոցի, 8-րդ շենքի 42 բնակարանը նվիրաբերել Պարգեւ Պավլեի Դավթյանին (ծնված 1953.21.02, անձնագիր AE 0600417) որպես փոխհատուցում իր կատարած երկարամյա կուսակցական աշխատանքի, որի արդյունքում վերջինս տրամադրել է իր ժամանակը, մտավոր եւ նյութական միջոցները ի նպաստ ՀՌԱԿ-ի:**

**2. Նվիրատվությունը իրականացնելու համար ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը լիազորում է ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանին:**

* * * * * * * * * * * * * * * * * * * *

| ատենադպիր | փոխատենապետ |
|---|---|
| ***Կարեն Կակոյան*** | ***Վանո Գրիգորյան*** |

**Փաստաթուղթ 2**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**Երկու հազար ինը թվականի փետրվարի տասներեքին**

**ք. Վանաձոր**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ», իրավաբանական հասցեն՝ ՀՀ, քաղաք Երեւան, Կորյունի փողոց, շենք 19ա, 3-րդ հարկ, որի անունից՝ համաձայն լիազորագրի տրված 29.01.2009 թ., հանդես է գալիս ատենապետ Հարություն Վաղարշակի Առաքելյանը, ծնված 15.09.1962 թ., անձնագիր՝ AH0232197, տրված 27.07.2006 թ., 011-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երեւան, Մաշտոցի փողոց, շենք 14, բնակարան 20 հասցեում, այսուհետ «Նվիրատու», եւ Պարգեւ Պավլեի Դավթյանս, ծնված 21.02.0953 թ., անձնագիր՝ AE 0600417, տրված 16.05.2000 թ., 018-ի կողմից, հաշվառված Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վանաձոր, Երեւանյան խճ., շենք 141, բնակարան (անընթեռնելի) հասցեում, այսուհետ՝ «Նվիրառու»:**

**ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ**

**1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ», որի անունից, համաձայն լիազորագրի, հանդես է գալիս ատենապետ Հարություն Վաղարշակի Առաքելյանը, Պարգեւ Պավլեի Դավթյանին նվիրեց սեփականության իրավունք՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ» պատկանող Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Տ. Մեծի պող., շենք 8, բնակարան 42 հասցեում գտնվող անշարժ գույքը:**

**Իսկ ես՝ Պարգեւ Պավլեի Դավթյանս «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ» ընդունեցի նվեր ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Տ. Մեծի պող., շենք 8, բնակարան 42 հասցեում գտնվող անշարժ գույքը:**

**2. Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է բնակարանից՝ 37.47 քմ ընդհանուր մակերեսով:**

* * * * * * * * * * * * * * * * * * * *

**«ՆՎԻՐԱՏՈՒ»**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ» իրավաբանական հասցեն՝ ՀՀ, քաղաք Երեւան, Կորյունի փողոց, շենք 19ա, 3-րդ հարկ, որի անունից, համաձայն լիազորագրի, հանդես է գալիս ատենապետ՝**

**Հարություն Վաղարշակի Առաքելյանը**

**«ՆՎԻՐԱՌՈՒ»**

**Պարգեւ Պավլեի Դավթյան**

*ՏՈՐՈՆՏՈ*

# CBC-ի հարցազրույցը Մարդու իրավունքների իռլանդական կենտրոնի տնօրենի հետ



**Տորոնտոյում (Կանադա) գործող Զորյան ինստիտուտի «Ցեղասպանության եւ մարդու իրավունքների միջազգային բաժնից» (ՑՄԻՄ) ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ օգոստոսի սկզբներին CBC-ի «Metro Morning» ռադիոծրագիրը (հաղորդավոր՝ Մեթ Գալլովեյ) հարցազրույց է վարել Իռլանդիայի ազգային համալսարանի Մարդու իրավունքների իռլանդական կենտրոնի տնօրենի, պրոֆ. Ուիլյամ Շաբասի հետ, որը միաժամանակ նույն համալսարանում մարդու իրավունքների օրենքի ամբիոնի վարիչն է: Անցյալում եղել է Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախագահը եւ այժմ «Ցեղասպանության եւ միջազգային իրավունք» առարկան է դասավանդում «ՑՄԻՄ-ի» համալսարանական ծրագրերի բաժնում:**

**Հարցազրույցի ժամանակ հաղորդավարը զարմանք է արտահայտել, թե ինչպե՞ս է, որ ամառային այդ դասընթացներն այդքան մեծ պահանջարկ ունեն երիտասարդների շրջանում, երբ նրանցից շատերը պիտի ցանկանային կտրվել առօրյա եւ աշխարհիկ հոգսերից ու հանգստանալ: Պրոֆ. Շաբասը պատասխանել է. «Դա «ֆլագմանի նավի» դերն է կատարում: Այդ դասընթացի նմանը չկա ամբողջ աշխարհում: Այո, մեծ թվով ուսանողներ գալիս են աշխարհի ամենատարբեր անկյուններից մի քանի շաբաթվա ընթացքում ավելացնելու իրենց գիտելիքներն այդ բնագավառում, որպեսզի հետագայում խորանան իրենց ընտրած մասնագիտություններում»:**

**Նա ավելացրել է, որ «Ցեղասպանությունը հարատեւող սպառնալիք է, եւ ուսումնասիրելով անցյալի փորձը, մենք փորձում ենք ուղիներ որոնել նման երեւույթները կանխելու համար»: «Ռուանդան մեզ սովորեցրեց, որ գործելու պարտականություն ունենք, բայց մենք գիտակցում ենք, որ գործելու հրամանը տալիս են մեծ տերությունների ղեկավարները, որոնք, եթե իրենց շահերից չի բխում, հրաժարվում են այդ հրամանը տալ: Այս բացն է, որ մենք պետք է կարողանանք լցնել, որպեսզի պատմությունը չկրկնվի», ասել է Շաբասը՝ բացատրելով, որ ծրագիրը, որ այս տարի բոլորում է իր տասնամյակը, նաեւ համեմատական ուսումնասիրությունների հնարավորություն է տալիս, եւ դա ընդլայնում է ուսանողների մտավոր ընդունակությունները:**

**Ըստ հաղորդագրության, ներկայիս այդ ծրագրին մասնակցում են 23 ուսանողներ ութ տարբեր երկրներից:**

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# Դրամն արժեւորվել է, դոլարայնացումը՝ նվազել

*1-ին էջից*

**Անցել է ավելի քան 5 ամիս, եւ կարելի է արձանագրել, թե ինչ տեղի ունեցավ դրամի փոխարժեքի եւ Հայաստանի տնտեսության դոլարայնացման մակարդակի հետ:**

**Փոխարժեքը նախ կայունացավ 1 դոլարի դիմաց 370-375 դրամի վրա, ապա վերջին մեկ-երկու ամսվա ընթացքում սկսեց իջնել մինչեւ 365-370 դրամը: Այսինքն, դրամը ոչ թե արժեզրկվեց, այլ արժեւորվեց: Ինչը սպասելի էր, քանի որ հնարավոր վերեւում նշած գործոնների առկայությունը չէր կարող փոխարժեքի վրա այլ ազդեցություն թողնել: Հնարավոր չէ միաժամանակ զսպել գնաճը եւ արժեզրկել դրամը կամ պահանջել բանկերից ավելացնել դրամով պահուստավորումը՝ չնպաստելով դրամի արժեւորմանը եւ այլն: Դոլար-դրամ ներկայիս փոխարժեքն, ամենայն հավանականությամբ, ուղենշային կդառնա նաեւ տարվա մնացած ամիսների ընթացքում, քանի որ աշնան ամիսները համարվում են տնտեսական բարձր ակտիվության ամիսներ, իսկ դեկտեմբերը՝ ամենաբարձրը, երբ դրամի արժեւորման միտումը խորանում է:**

**Ինչ վերաբերում է դոլարայնացման մակարդակին: Դարձյալ անդրադառնանք ԿԲ հրապարակած ցուցանիշներին: Համաձայն դրանց, ինչպես եւ կանխատեսել էինք, մարտին հաջորդող ապրիլին դոլարայնացման ցուցանիշը մեր երկրում որոշակիորեն բարձրացավ: Արտարժութային ավանդները ընդհանուր ավանդների մեջ ապրիլին կազմեցին 66 տոկոս՝ մարտի 65,1 տոկոսի դիմաց, իսկ արտարժութային ավանդները փողի զանգվածի մեջ պահպանվեցին մարտի արդեն իսկ բարձրացած մակարդակի՝ 45,6 տոկոսի վրա: Սակայն մայիս եւ հունիս ամիսների արդյունքներով վերոնշյալ ցուցանիշները սկսեցին նվազել, ինչը փոխկապակցված է դրամի արժեւորման հետ: Մայիսին արտարժութային ավանդների բաժինը ընդհանուր ավանդների մեջ վերադարձավ մարտի 65,1 տոկոսին, իսկ հունիսին կազմեց 64,7 տոկոս: Արտարժութային ավանդները փողի զանգվածի մեջ մայիսին նվազեցին մինչեւ 45 տոկոս, իսկ հունիսին՝ 44,6 տոկոս:**

**Վերոնշյալից դատելով, կարելի է ենթադրել, որ դոլարայնացման նվազման միտումը հետագայում նույնպես կպահպանվի, թեեւ ոչ կտրուկ, քանի որ դոլարի նկատմամբ Հայաստանի բնակչության մի զգալի մասի կույր հակվածությունը դեռ երկար կպահպանվի:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Հաշմանդամների թոշակի հաշվին փող են աշխատում

Սեւան քաղաքի բնակիչ **Գագիկ Նավասարդյանը** 4 տարի առաջ Սեւանա լճում մոտորանավակին ընդհարվելու հետեւանքով ծանր մարմնական վնասվածք է ստացել. անդամահատվել է նրա ոտքը: Գեղարքունիքի մարզի թիվ 1 բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովը (ԲՍՓՀ) Նավասարդյանին նշանակել է հաշմանդամության երկրորդ խումբ, սակայն երբ Գագիկը պրոթեզավորվել է, նրա խումբն անժամկետ փոխվել է երրորդի` պատճառաբանությամբ, թե երիտասարդը պրոթեզավորվել է եւ հեշտությամբ է տեղաշարժվում:

Գեղարքունիքի թիվ 1 ԲՍՓՀ-ի ընդունած որոշումը Գագիկը բողոքարկում է` դիմելով ՀՀ ԲՍՓ գործակալությանը, սակայն ապարդյուն: Վարչական դատարանում Գագիկի հայցը բավարարում են, սակայն պատասխանող կողմը բողոքարկում է դատարանի որոշումը, եւ Վճռաբեկ դատարանը վճիռ է կայացնում հօգուտ ԲՍՓՀ-ի:

Որ ՀՀ ԲՍՓ գործակալությունն ու երկրի դատական համակարգը օրենք են խախտել եւ ոտնահարել մարդու իրավունքներ, փաստում է Փաստաբանների պալատի անդամ **Գայանե Խաչատրյանը**: «Երկրորդ կարգից երրորդ կարգ տեղափոխել` պատճառաբանելով պրոթեզավորումը, անհեթեթություն է եւ խախտում է կառավարության 2003 թ. ընդունած թիվ 780 «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները եւ հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները հաստատելու մասին որոշումը»:

Գագիկ Նավասարդյանը Վճռաբեկի որոշումը բողոքարկել է: Եթե տեղական դատական համակարգը արդար որոշում չընդունի, Նավասարդյանը խոստանում է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: «Մեզ համար տհաճ է ձեւակերպումը` «Գագիկ Նավասարդյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության», որովհետեւ մենք չենք ուզում մեր երկրին դատի տալ, մենք ընդամենը ցանկանում ենք պայքարել բյուրոկրատիայի եւ անօրինականության դեմ, ցանկանում վերականգնել մեր իրավունքները», ասում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ **Արմեն Ալավերդյանը**:

Գագիկ Նավասարդյանն էլ պատմում է, որ հաշմանդամ դառնալուց հետո բախվել է պետական մարմիններում առկա բյուրոկրատիային: «Վրդոված եմ պետական մարմինների վերաբերմունքից, բացի իմ խնդիրները` գումարվում են այլ խնդիրներ: Ստեղծված է մի համակարգ, որ դիտավորյալ մարդուն քաշքշուկների մեջ է գցում: Քեզ ոչ ոք չի առաջարկում կաշառք տալ, բայց դու ստիպված ուզում ես այլ ուղիներ փնտրել` այդ ամենն ավելի հեշտ անցնելու համար», ասում է Նավասարդյանը` հավելելով, որ ինքը կաշառք չի վճարելու եւ պետության կողմից իրեն հասանելիքի համար չի կաշառելու:

Թե ինչո՞ւ է ԲՍՓ-ն քաշքշուկներով տրամադրում առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամության թուղթ` բացատրությունը պարզ է: Եթե երկրորդ խմբի հաշմանդամության կարգ ունես` ավելի բարձր թոշակ ես ստանում, բուժօգնությունը, դեղերն ու կրթությունն անվճար են ի տարբերություն երրորդ խմբի: Գագիկ Նավասարդյանի դեպքը առաջինն ու միակը չէ: Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք ընդհուպ կաշառք ու ծանոթ են մեջտեղ գցում իրավունքները պաշտպանելու համար: Բազմաթիվ են նաեւ դեպքերը, երբ մարդը` հոգնելով բյուրոկրատական քաշքշուկներից` հրաժարվում է պայքարել իրավունքների պաշտպանության համար: Կոպիտ ասած` ԲՍՓ մասնագետները յուղոտ պատառ են ստանում հատկապես զորակոչերի ժամանակ: Հաշմանդամություն ունեցող երիտասարդին, որ տեսողական լուրջ խնդիրներ ունի, սրտի արատ եւ այլն, զորակոչում են բանակ ու ծնողից պահանջում մի քանի հազար դոլար իրական ախտորոշման համար: Հաճախ են դեպքերը, երբ առողջ երիտասարդին բանակից ազատելու համար որեւէ հիվանդություն են «կցցնում» եւ համարում «ոչ պիտանի»: Իհարկե, կլորիկ գումարի դիմաց:

Ընդգծենք, որ ԲՍՓ-ները աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ են գործում, իսկ եթե հիշենք, թե վերջին մի քանի տարվա ընթացքում Վերահսկիչ պալատն ինչպիսի խախտում, կոռուպցիա եւ փողերի լվացում է արձանագրել այդ նախարարությունում, ակնհայտ կդառնա, որ ԲՍՓ-ներն էլ, մեղմ ասած, մաքուր չեն գործում:

Արմեն Ալավերդյանը հիշում է, որ դեռեւս երկու ամիս առաջ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պաշտոնական կայքում www.Hhbsp.am, նշված էր, որ հանրապետությունում հաշմանդամների թիվը 185.000 է: Ներկայումս այդ թիվը 172.000 է: «13.000-ով պակասել է այդ թիվը: Ի՞նչ եղան այդ մարդիկ. ստուգումներ եղան, եւ պարզվեց, որ կամ չկան, կամ հաշմանդամ չեն, կամ էլ տարիներ առաջ հեռացել են երկրից»: Բնական է, որ հաշմանդամություն ունեցող 13.000 անձանց հասանելիք թոշակն ու փարոսը գնացել են ինչ-որ մեկի գրպանը:

Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին` Ալավերդյանն ասաց, որ գլխավորը պրոբլեմը ազատ տեղաշարժումն է:

«Տրանսպորտը հարմարեցված չէ, որ հաշմանդամներն էլ կարողանան երթեւեկել, ներկայիս բարձրահարկ շենքերում չկա որեւէ պայման ազատ տեղաշարժման համար: Հաշմանդամները դուրս են մշակութային կյանքից, իսկ գլխավոր խնդիրը աշխատանքի տեղավորվելն է»:

Այսօր հաշմանդամների միայն 8 տոկոսն է ապահովված աշխատանքով, իսկ ինչո՞վ զբաղվի մնացած 92 տոկոսը կամ ինչպես ապրի պետությունից տրամադրվող 10-13.000 դրամ թոշակով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՖՈՏՈԼՈՒՐ

# Սիվիլլրատվություն` համացանցով եւ տպագիր

«Սիվիլիթաս» հիմնադրամը սեպտեմբերից նախաձեռնում է համացանցով լրատվության հեռարձակում եւ օրաթերթի հրատարակություն, ինչպես նաեւ հանրային հարցումների անցկացում: Այս մասին **«Ազգին»** ուղարկած տեղեկագրում հայտնել է «Սիվիլիթասի» տնօրեն Սալբի Ղազարյանը, այս նախաձեռնությունները բացատրելով որպես «Սիվիլիթասի»` քաղաքացիական հասարակությունը հզորացնելու առաքելության բնական շարունակություն եւ Հայաստանում բաց, մատչելի եւ միեւնույն ժամանակ իմաստալի տեղեկատվական դաշտ ունենալու կարիքը լրացնել փորձելով: «Սիվիլնեթը» համացանցով հեռարձակվելու է հայերեն եւ անգլերեն, լուսաբանելու է ներքին կյանքը, տարածաշրջանային զարգացումները, միջազգային իրադարձությունները, լինելու են տեղական եւ օտարերկրյա փորձագետների մեկնաբանություններ: Իսկ օրաթերթը, տնտեսական եւ քաղաքական խնդիրների անդրադարձի հետ մեկտեղ, ներկայացնելու է վերլուծություններ եւ հանրային կարծիք` չանտեսելով սոցիալական հարցերը, մշակույթն ու սպորտը: Սա կարելի է համարյա քաղաքական հայց համարել, մանավանդ Հայաստանում քաղաքականությունը սկսվում եւ ավարտվում է մամուլով, մնում է գծել քաղաքական շրջանակն ու դերակատարներին (սա դժվար չէ-Մ.Խ.): Իսկ ամեն նոր թերթ կամ ինտերնետային կայք բացող համարյա այս կարգի առաջին խմբագրական է գրում, բայց արդյունքը բոլորին հայտնի է` ամեն ԶԼՄ համարյա կողմ է եւ ներկայացնում է ինչ- որ ուժի ու անգամ անձի: Չնայած` ինչ իմանաս, «Սիվիլիթասի» մոտ կարող է ստացվել, մանավանդ որ ե՛ւ Սալբի Ղազարյանը, ե՛ւ «Սիվիլիթասի» տնօրեն Վարդան Օսկանյանը լրատվական դաշտում նորեկներ չեն եւ ԱՄՆ-ում հրատարակել են Միջազգային հայկական ամսագիրը (AIM):

«Սիվիլիթասի» հաղորդագրությունից պարզ է դառնում նաեւ, որ հայտնի ռոք-երաժիշտ Սերժ Թանգյանին, «Քաունթերփարթ ինթերնեշնըլ» եւ «Կանաչաստան» կազմակերպությունների հետ միասին, հենց «Սիվիլիթասն» է հանդիպեցրել Հայաստանի քաղաքացիական ակտիվիստների հետ, որի ժամանակ Թանգյանը պատմել է, թե ինչպես է կամովին իր անունն օգտագործում հանուն լավ գաղափարների, եւ ներկաներին քաղաքացիական նախաձեռնություններին գիտակից մասնակցության կոչ է արել:

Մ. Խ.

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Մանկավարժականում վերապատրաստվեցին ավագ դպրոցի ուսուցիչները

**2011թ. օգոստոսի 2-ից 17-ը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն անցկացրեց ՀՀ կառավարության հաստատված 16 ավագ դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացները, որոնց մասնակցեցին ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի ավագ դպրոցների 178 ուսուցիչներ:**

**Որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցել են 43 դասախոսներ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ից, Երեւանի պետական համալսարանից, Երեւանի պետական բժշկական համալսարանից, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանից, կրթության եւ գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտից, Գնահատման եւ թեստավորման կենտրոնից:**

**Որակավորման բարձրացման դասընթացներին ընդգրկվել են հանրապետության առաջատար մասնագետներ, ովքեր ունեն այդ բնագավառում երկարամյա փորձ. ավագ դպրոցի դասագրքերի, ծրագրերի, ուսումնական ձեռնարկների հեղինակ են, մասնակցել են նախորդ որակավորման բարձրացման դասընթացներին:**

**Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացը հաջողությամբ ավարտած ավագ դպրոցների ուսուցիչների հավաստագրերի պաշտոնական հանձնման արարողությունը, որին մասնակցեցին ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, ՀՀ կրթության եւ գիտության փոխնախարար Մանուկ Մկրտչյանը եւ ԿԳՆ ԾԻԳ-ի տնօրեն Հայկ Մաղաքյանը:**

# Հասարակական հսկիչ կամ կրոնական ոստիկանություն

*1-ին էջից*

Այժմ մեկ այլ հարց` արդյո՞ք նման «թույլտվություններ» ունեցող կրոնական կազմակերպությունները կարող են իրենց ճնշված զգալ Հայաստանում: Համաձայն կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի` յուրաքանչյուր նման կազմակերպություն պարտավոր է գրավոր ու հանրամատչելի ներկայացնել իր կրոնա-դավանաբանական հայեցակարգը, սակայն առ այսօր Հայաստանում գործող ոչ մի կրոնական կազմակերպություն նման ձեռնարկով հանդես չի եկել: Խոսքն ամենեւին բազմաքանակ աղանդավորական բրոշյուրների ու գրքույկների մասին չէ, այլ` կազմակերպության կարգի, ներքին օրենսդրության, դավանանքի սահմանման, ըստ որի յուրաքանչյուր ոք կարող է տեղեկություն ստանալ` ո՞վ է այդ կազմակերպությունը, ինչպե՞ս կարելի է անդամակցել դրան, ինչի՞ց (իսկ գուցե եւ ումի՞ց) պետք է հրաժարվել` անդամակցելու համար, որքա՞ն գումար ամեն ամիս կամ ամեն տարի պետք է գանձի իր անդամներից կազմակերպությունը, այդ գումարների գանձման նպատակը, առհասարակ` կազմակերպության գոյության նպատակը եւ այլն: Կրկնենք եւ շեշտենք` հայաստանյան ոչ մի կրոնական կազմակերպություն նման տեղեկություններ ոչ բանավոր, ոչ գրավոր, ինչը պարտադրում է օրենքը, չի ներկայացնում: Հետեւաբար` գործ չունե՞նք մենք այստեղ ՀՀ օրենքի խախտման հետ: Իսկ մեկ այլ օրենքի խախտում չէ՞ն արդյոք աղանդավորական գրականության տպագրումը, վաճառքը, կամ տարածումը: Մայրաքաղաքի ու հատկապես մարզերի մի շարք գրավաճառների մոտ (ոմանց մոտ` առանց իրենց գիտության- Հ. Ա.) վաճառվում է աղանդավորական գրականություն, որտեղ չկան ոչ հրատարակման տարեթիվը, ոչ հրատարակողի անունը, տվյալները: Հետեւաբար` պե՞տք է պայքարել աղանդավորների դեմ, եթե այո, ապա ո՞վ. եկեղեցի՞ն, պետությո՞ւնը, թե՞ մենք` հասարակությունը:

«Հայ առաքելական եկեղեցին երբեք չի պայքարել եւ չի պայքարելու իր «մոլորյալ զավակների դեմ», մենք նրանց դարձին ենք սպասում», այսպես հայտարարեց Սուրբ Հովհաննես եկեղեցու քահանա տեր **Շմավոն Ղեւոնդյանը** երեկ «Հենարան» ակումբում հրավիրված ասուլիսում: Բացի սրանից` քահանան արձանագրեց, որ Երեւանի շուրջ մեկմիլիոնանոց բնակչությանը սպասարկում են 20 քահանա ընդամենը. «Բավական բարդ խնդիր է հոգեւորական պատրաստելը: Ճեմարան ամեն տարի ընդունվում են ընդամենը 20-30 հոգի, իսկ ավարտում են 10-15-ը: Ոմանք չեն դիմանում, ոմանք հասկանում են, որ հոգեւոր ծառայությունը իրենցը չէ...»:

Իսկ մյուս կողմից, նույն ասուլիսի երկրորդ բանախոս «Քայքայիչ պաշտամունքներից տուժածների օգնության եւ վերականգնման» կենտրոնի նախագահ **Ալեքսանդր Ամարյանը** արձանագրեց. «Այսօր Հայաստանում ունենք շուրջ 67 կրոնական կազմակերպություններ, որոնցից 10 հարում են Հայ առաքելական եկեղեցուն, 6-ը մյուս եկեղեցիների` կաթոլիկ եւ ուղղափառ հետեւորդներն են, մնացած բոլորը աղանդավորական են: Մեր մոտավոր հաշվարկներով` այսօր երկրում ունենք 300-350 հազար աղանդավորներ, ինչը երկրում ընտրողների 1/3 մասն է կազմում»: Իսկ ի՞նչ կարող է սա նշանակել. արդյոք հնարավոր չէ՞, որ առանձին կուսակցություններ երաշխավորված ձայներ ստանալու համար աղանդավորական կազմակերպությունների ղեկավարների հետ գան համաձայնության, իհարկե, որոշակի «վարձատրման» դիմաց: Եվ մի՞թե աղանդավորները կբավարարվեն միայն դրամական վարձատրությամբ, երբ կարող են, ասենք, սկսել պահանջել նաեւ որոշ համամասնական տեղեր խորհրդարաններում, հետեւաբար` գոնե որոշակիորեն տիրապետել պետության օրենսդրական դաշտին:

Այժմ, երբ մեր շուրջ 3-միլիոնանոց բնակչությամբ երկրի ներսում ունենք մեկ այլ` շուրջ 350 հազար բնակչությամբ «պետություն», պե՞տք է պայքարել աղանդների դեմ, եթե այո, ապա ո՞վ, եթե ոչ պետությունն ու հասարակությունը միասին: Ամարյանի առաջարկությամբ` անհրաժեշտ է բարեփոխել համապատասխան օրենսդրությունը. «Չկա կրոնական կազմակերպությունների աշխատանքը ոչ թե սահմանափակողի, այլ հսկողի իրավունք, չեն պատրաստվում կրոնագետ-իրավաբաններ, հոգեբաններ, այլ մասնագետներ, այնինչ մեկ աղանդավորի «ուշքի բերելու» համար անհրաժեշտ են 2-7 տարի եւ ֆինանսական միջոցներ: Անհրաժեշտ է սահմանել, եթե կարելի է ասել` հասարակական հսկիչ կամ հսկիչ կազմակերպություն», եզրակացրեց Ամարյանը:

Իհարկե, «հսկել» չի նշանակում «արգելել» կամ «սահմանափակել», եւ այն արդեն իսկ կրոնական կազմակերպությունների առումով անհրաժեշտություն է դարձել մեզ համար: Իսկ ի՞նչ «կասի» Եվրոմիությունն ու իր Մարդու իրավունքների դատարանը հսկելու պարագայում` ոչինչ. օրինակ, ԵՄ-ի անդամ Ֆրանսիան հենց նման «դեպքերի համար» ունի կրոնական ոստիկանություն, որը ենթարկվում է անմիջապես վարչապետին: Նմանատիպ կառույցներ գործում են ԵՄ անդամ կամ պարզապես Եվրոպայում գտնվող մի շարք այլ երկրներում. որոնք գիտակցում են ազգային անվտանգություն ասածի արժեքը:

# Սկաուտական շարժումն Արցախում


«Շյուտ-շյուտ», շտապեցնում է խմբապետը «Հայկի սերնդի» սկաուտներին:

Արցախում սկաուտական շարժումը, որքան մեզ հայտնի է, նախախորհրդային շրջանում, առավել եւս, բնականաբար, խորհրդային իշխանության օրոք գոյություն չի ունեցել:

Այն սկզբնավորվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից տարիներ անց՝ 1994թ., Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության Արցախի կառույցի (ՀՅԴ Արցախի ԿԿ) նախաձեռնությամբ եւ Հայաստանում մինչ այդ արդեն գործող Հայաստանի ազգային սկաուտական կազմակերպության (ՀԱՍԿ) աջակցությամբ: Տարբեր տարիներին Արցախի տարբեր վայրերում կազմակերպվել են ինչպես տեղական, այնպես էլ համահայկական սկաուտական բանակումներ, այդ թվում, մասնավորապես, 1998թ.՝ Աշան գյուղում, Հայկական բարեգործական ընդհանուր միության Թեհրանի մասնաճյուղի, Իրանի «Արարատ» եւ «Սիփան» մարզամշակութային միությունների սկաուտական կառույցների մասնակցությամբ:

Մինչ այդ՝ 1997թ. արցախցի 20 երիտասարդ սկաուտական վերապատրաստման դասընթաց էր անցել Թեհրանում:

1999թ. Արցախում կազմակերպվել է Հայ մարմնամարզական ընդհանուր միության (ՀՄԸՄ) համահայկական սկաուտական բանակում:

Սակայն նույն թվականին իսկ ՀՅԴ Արցախի ԿԿ-ն դադարեցրեց իր սկաուտական կառույցի գործունեությունը այն պատճառաբանությամբ, որ կուսակցությանը կից ստեղծել է եւ գործում են ուսանողական եւ երիտասարդական միություններ:

Արցախում սկաուտական շարժման ձեւավորման համար յուրօրինակ խթան ծառայեց Թեհրանի «Րաֆֆի» հայ մարզամշակութային համալիրի («Րաֆֆի» ՀՄՄՀ) կազմակերպած բանակումը ԼՂՀ Ասկերանի շրջանի տարածքում՝ 2005թ. օգոստոսի 9-15-ը, որն իրականացվեց ԼՂՀ «Հայկի Սերունդ» երիտասարդական հասարակական կազմակերպության («Հայկի Սերունդ» ԵՀԿ) հետ սերտ համագործակցության պայմաններում՝ բանակումին այդ կազմակերպության անդամների անմիջական մասնակցությամբ: Նույնը կրկնվեց նաեւ 2006թ. օգոստոսին՝ Շուշիում, այս անգամ՝ որպես «Հայորդիներ» համահայկական մանկապատանեկան-երիտասարդական ամենամյա բանակում, դարձյալ վերը նշված համատեղ նախաձեռնությամբ ու համագործակցությամբ: Բացի նախաձեռնող կողմերից, բանակումին մասնակցում էին նաեւ Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի ու Կապանի «Սյունյաց Արծիվներ» երիտասարդական-հասարակական կազմակերպության անդամները:

2007թ. օգոստոսի 14-24-ը «Հայկի Սերունդ» ԵՀԿ 5 անդամ ուղեւորվել է Թեհրան՝ մասնակցելու «Րաֆֆի» ՀՄՄՀ-ի կազմակերպած դասընթացներին:



«Հայկի սերունդ»-ականերն այցելում են Շուշիի թանգարան:

Նշված բանակումների փորձը տեսական ու կազմակերպական էական նախադրյալ հանդիսացավ Արցախում սկաուտական շարժման՝ որպես մատաղ սերնդի հայեցի, ռազմահայրենասիրական, բարոյական եւ ֆիզիկական դաստիարակության ձեւի, տարածման ու զարգացման համար: Առավել եւս, որ դաստիարակության այդ կարեւոր ու, փաստորեն, աշխարհի բազմաթիվ երկրներում բավականին փորձություն անցած եւ բոլոր առումներով իրեն արդարացրած միջոցը՝ սկաուտական շարժումը, հայտնվեց Արցախի Հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում՝ դառնալով նրանց հոգածության առարկան: Այս առումով հատկանշական է, որ ԼՂՀ նախագահի հովանու ներքո եւ համակողմանի աջակցության շնորհիվ է, որ 2010թ. օգոստոսի 3-10 Շուշիում կազմակերպվեց «Հայորդիներ» Արցախի սկաուտական բանակումը: Կյանքի կոչվելով «Բարձրացիր՝ բարձրացրու» նշանաբանի ներքո, այն, ըստ էության, հիմք դրեց Արցախում սկաուտական շարժմանը: Շուշիի բանակումի, ինչպես որ նորաստեղծ սկաուտական շարժման նպատակներ հռչակվեցին.

1. զորակցել աճող սերնդի հայեցի դաստիարակությանը.
2. զարգացնել երկրի տիրոջ հոգեբանություն.
3. նպաստել առողջ ապրելակերպի արմատավորմանը.
4. դաստիարակել շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարություն.
5. օգնել երիտասարդների շփումների ակտիվացմանն ու աշխարհայացքի ընդլայնմանը տարաբնույթ միջոցառումների (խաղեր, մրցույթներ, էքսկուրսիաներ) միջոցով.
6. խթանել սկաուտական շարժման զարգացումն ու տարածումն Արցախում.
7. դարձնել Շուշին համահայկական երիտասարդական հավաքատեղի.
8. համախմբել համայն հայ երիտասարդության ներուժն Արցախում՝ «Ուղին ճշմարիտ է, երբ Հայրենիք է բերում» կարգախոսի ներքո:

Բանակումը նախաձեռնեց եւ իրականացրեց «Հայկի Սերունդ» ԵՀԿ-ն (նախագահ՝ Արմինե Պետրոսյան): Հաշվի առնելով այդ ուղղությամբ այդ երիտասարդական-հասարակական կազմակերպության քանիցս ցուցաբերած նախաձեռնողականությունն ու կուտակած որոշակի փորձը, իշխանությունները հենց նրան էլ վստահեցին Արցախում սկաուտական շարժման կազմակերպման, տարածման ու զարգացման՝ հանրային կարեւոր նշանակության ու պատասխանատու խնդրի իրականացումը: Շուշիի բանակումին մասնակցում էր 6 ջոկատ՝ յուրաքանչյուրում 20 անդամ: Ջոկատներից 4-ը Արցախից էր, 1-ական՝ Թեհրանից եւ Հայաստանից: Վերջինս ներառում էր ՀԲԸՄ Հայաստանի մասնաճյուղի սկաուտներին, Հայաստանի Հանրապետական կուսակցության երիտասարդական թեւի եւ «Միասին» երիտասարդական շարժման անդամներին:

Բանակումի նախավերջին օրը՝ օգոստոսի 9-ին, տեղի ունեցավ հավաքի պաշտոնական փակման հանդիսավոր արարողությունը՝ հանրապետության նախագահ Բակո Սահակյանի, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հոգեւոր առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, գրող-հրապարակախոս, Արցախի հերոս Զորի Բալայանի, պետական այլ այրերի, բարձրաստիճան զինվորականների ներկայությամբ: Արարողությանը Արցախի հոգեւոր առաջնորդն օրհնեց հանրապետությունում սկաուտական շարժման ծնունդը:

Այդպիսով, 2010թ. օգոստոսի 9 կարելի է անվանել Արցախում սկաուտական շարժման հիմնադրման օր:

Շարժումը, որը ստեղծվել է որպես «Հայկի Սերունդ» ԵՀԿ-ին կից գործող բաժանմունք, առաջնորդվում է գործունեության հատուկ կանոնակարգով, ունի իր կառավարման մարմիններն ու օղակները եւ նպատակադրված է տարածվել հանրապետության բոլոր բնակավայրերում՝ որպես համաարցախյան շարժում:

Այդ իսկ նպատակով, հանրապետության իշխանությունների կողմից «Հայկի Սերունդ» ԵՀԿ-ին Ստեփանակերտի կենտրոնում՝ հանրային շենքերից մեկում տրամադրվել է հարմարավետ հարկաբաժին՝ որպես սկաուտական շարժման գրասենյակ օգտագործելու համար:

Նույն թվականի նոյեմբերի վերջերին կազմակերպությունն իրականացրեց «Հայորդիներ» սկաուտական աշնանային բանակում՝ 35 հոգու մասնակցությամբ, կազմակերպելով այդ ոլորտի պատասխանատուների վերապատրաստման դասընթացներ:

Առաջադրված խնդիրը հաջողությամբ իրականացնելու նպատակով «Հայկի Սերունդ» ԵՀԿ-ն համագործակցության սերտ կապերի մեջ է ինչպես Հայաստանի, նույնպես եւ Սփյուռքի մի շարք երիտասարդական կազմակերպությունների ու սկաուտական կառույցների հետ:

**Ս. ՀԱԶԻՅԱՆ**

# Հայ ոսկերիչների միջազգային միության (AJA) նախագահ Գագիկ Գեւորգյանի այցելությունն ու հանդիպումները Լիբանանում

**Լիբանանահայ գործարարների համախմբման եւ Հայ ոսկերիչների միության նախաձեռնությամբ, օրերս Բեյրութ այցելեց հայ ոսկերիչների միջազգային միության (AJA) նախագահ Գագիկ Գեւորգյանը: Ռուսաստանի ամենամեծ «Էստետ» ոսկերչական հաստատության հիմնադիրն ու սեփականատերը, իր «Էյ-Ջեյ-Էյ»-ի (AJA) նախագահ ընտրվելու առաջին օրից՝ ձեռնարկել էր կազմակերպությունը աշխուժացնելու, սփյուռքում թե հայրենիքում հնագույն այդ արհեստ-արվեստը զարգացնելու ու միջազգային ցուցահանդեսներում միացյալ եւ հզոր ներկայությամբ հանդես գալու բազմաթիվ ծրագրերով:**

**Օգոստոսի 10-ին ժամանելով Բեյրութ, նախագահ Գագիկ Գեւորգյանն ու պատվիրակությունը ջերմորեն ընդունվեցին Լիբանանահայ գործարարների համախմբման նախագահ Նազարեթ Սաբունջյանի եւ գործադիր վարչության անդամների, AJA -ի Լիբանանի ղեկավարության կողմից:**

**Այս միջազգային հայկական կազմակերպության փոխնախագահն է Պերճ Աբաջյանը, քարտուղարը՝ Հովեր Շնորհոքյանը, գործադիր վարչության անդամները՝ Նազարեթ Սաբունջյանը եւ Հարրի Գազանջյանը: Իսկ Լիբանանի AJA-ի անդամներ՝ Լորանս Թյուֆենկչյանը, Հակոբ Տաքեսյանը, Պետիկ Սաբունջյանը, Հակոբ Միսիրյանը, Վազգեն Հատիտյանը, նաեւ Ալեքս Ֆաքքալը, Գրիգոր Եսայանը եւ Ռոնի Մալչյանը (որոնք Գագիկ Գեւորգյանի այցելության օրերին աշխատանքով բացակայում էին Բեյրութից) կարեւոր աշխատանքներ էին կատարել Հայ ոսկերիչների միջազգային միությունը կազմակերպելու եւ արժանի բարձունքի վրա պահելու համար...**

**Գործարար հանդիպումներին զուգահեռ, Գագիկ Գեւորգյանը այցելեց Մեծի տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսին Անթիլիասի մայրավանքում: Երկժամյա հանդիպման ընթացքում քննարկվեցին հայապահպանման եւ արտագաղթի կասեցման, ոսկերչության միջոցով աշխատանքային տեղերի ապահովման, AJA-ի շնորհիվ հայ մշակույթի եւ հայ լեզվի զարգացմանը, հայ վարպետների ու ոսկերչական հաստատությունների միջեւ հաղորդակցությունները ուժեղացնելու եւ այլ հարցեր:**

**Նախագահ Գագիկ Գեւորգյանին ընդունեց նաեւ Լիբանանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը, որը հաջողություն մաղթեց այս կարեւոր կազմակերպության առաքելությանը, մանավանդ որ առաջիկա սեպտեմբերին՝ Հայաստանի Հանրապետության հիմնադրության 20-ամյակի օրերին, քաղաքամայր Երեւանում տեղի է ունենալու ոսկերչության միջազգային ցուցահանդես, սփյուռքից եւ արտասահմանից բազմաթիվ մասնակիցներով:**




**Հինգշաբթի, 11 օգոստոսի 2011-ի երեկոյան, Բեյրութի «Ռոյալ» հյուրանոցի շքեղ դահլիճում տեղի ունեցավ ճաշկերույթ՝ ի պատիվ Հայ ոսկերիչների միջազգային միության նախագահի: Ներկա էին Լիբանանահայ գործարարների համախմբման ղեկավարությունը, գործադիր վարչության անդամները, AJA-ի պատվիրակությունը, ազգային դեմքեր, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:**

**Ռուսաստանից ժամանած հայ պատվավոր հյուրին ու ներկաներին ողջունեց Նազարեթ Սաբունջյանը, հույս հայտնելով, թե այս այցելությունը սկիզբ կլինի ավելի մեծ ծրագրերի իրագործմանը, ի փառս սփյուռքի եւ մայր հայրենիքի: Ապա ելույթ ունեցավ Գագիկ Գեւորգյանը, որ նշեց, թե աշխարհի բնակչության շուրջ 1 տոկոսը կազմող հայությունը այսօր արտադրում է մեր երկրագնդի ոսկերչական արտադրանքի 5 տոկոսը...: Նա կարեւորեց այս հնագույն, «հայկական» արհեստ-արվեստի դերը հայապահպանման, հայ ժողովրդի գոյատեւման դարավոր պայքարում, որն շարունակվում է մինչեւ այսօր:**

**Գագիկ Գեւորգյանն իր հիացմունքը հայտնեց նաեւ լիբանանահայության հայապահպանման մեծ գոյապայքարի հանդեպ, առանձնապես նշելով իր գործընկերների կազմակերպվածությունը, հայրենասիրությունը, հյուրընկալությունը, նա խոստացավ իր բոլոր միջոցները տրամադրել Հայ ոսկերիչների միջազգային միությունը հասցնելու աշխարհի ամենաբարձր կազմակերպությունների մակարդակին՝ բոլորին ցույց տալու հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, ներդրումը մարդկային քաղաքակրթության մեջ:**

**Բուռն ծափահարություններով ընդունվելով ներկաների կողմից՝ ճաշկերույթը մինչեւ ուշ գիշեր շարունակվեց փոխադարձ զրույցի եւ մտքերի փոխանակման հաճելի մթնոլորտում:**

**12 օգոստոսին, շարունակելով իր գործնական հանդիպումները, միաժամանակ հարցազրույցներ տալով լիբանանահայ հեռուստատեսությանը, Գագիկ Գեւորգյանը հրաժեշտ տվեց Բեյրութին՝ մեկնելով Երեւան ու Մոսկվա:**

**ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ**
**Բեյրութ, Լիբանան**

***Խմբ. կողմից*-*Երեւանում արդեն, օգոստոսի 16-ին, Գագիկ Գեւորգյանն ընդունվեց հանրապետության նախագահի կողմից եւ նրան տեղեկացրեց սեպտեմբերի 21-ին կազմակերպվելիք միջազգային ցուցահանդեսի եւ հարակից հարցերի մասին:***

# Ռուսաստանում ընդլայնվում է աղքատությունը

Ռուսաստանի սոցիալական քաղաքականությունը հանգեցնում է երկրում աղքատության տարածմանը: Կառավարության առաջադրանքով ՌԴ մինչեւ 2020 թ. զարգացման ռազմավարությունը ճշգրտող փորձագետները փաստորեն խոստովանում են կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության սնանկությունը: «Վեդոմոստի» թերթը տեղեկացնում է, որ մոտ ժամանակներս փորձագետների զեկուցագիրը քննարկվելու է վարչապետ Վլադիմիր Պուտինի կառավարության խորհրդակցությունում:

Զեկուցագրում առաջարկվում է տնտեսական աճ ապահովել մարդկային կապիտալի բարձր որակի հաշվին, կառավարությանը պարտավորել նորացնել սոցիալական քաղաքականությունը: Նոր սոցիալական քաղաքականությունը պետք է աջակցի ոչ միայն բնակչության անպաշտպան խմբերին, այլեւ նրանց, ովքեր ի վիճակի են նորացումներ կատարել:

Փորձագետները նշում են, որ թեեւ 2000 թվականից ապրուստի նվազագույն մակարդակից ցածր եկամուտներ ունեցող բնակչության բաժինը եռակի նվազել է, բայց աղքատ ընտանիքներում երեխաների կուտակումը հանգեցնում է երկրի մարդկային ներուժի որակի անկմանը: Ըստ էության Ռուսաստանում սկսվել է աղքատների վերարտադրություն, որին զուգընթաց ձեւավորվում է առանձնահատուկ աղքատության ենթամշակույթ:



2009-ին աշխատունակ տարիքի 6,3 մլն տղամարդ չէր ուզում աշխատել (2000-ին նրանց թիվը 5,9 մլն էր), ինչը նշանակում է սոցիալական օգնություն ստացողների աճ եւ բնակչության լյումպենացում: Ռուսաստանում աղքատության ենթամշակույթի ներկայացուցիչները կազմում են 5 մլն (չհաշված անօթեւաններին եւ անօրինական ներգաղթյալներին):

Փորձագետները նշում են, որ զարգացած երկրները ապագայում մրցակցելու են ավելի շատ մարդկանց, քան բնական կամ ֆինանսական ռեսուրսների համար: Մինչդեռ Ռուսաստանում ներկայումս ստեղծվել է այնպիսի միջավայր, որը չի նպաստում մարդկանց ձեռներեցության դրսեւորմանը, ուստի երկիրը վտանգում է իրեն՝ հանդես գալով որպես գաղափարների եւ ուղեղների մատակարար:

Սոցիալական քաղաքականությունը փոխելու համար հարկ կլինի մինչեւ 2020 թվականը բյուջետային ծախսերն ավելացնել ՀՆԱ-ի 4 տոկոսով: Ընդսմին կարելի է 2 տոկոսով կրճատել ծախսերի մյուս հոդվածները, ուստի ծախսերի աճը կարող է կազմել ՀՆԱ-ի 2 տոկոսը:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ ապրուստի նվազագույն մակարդակից (6473 ռուբլի) ցածր եկամուտներ ունեցող աղքատների թիվը Ռուսաստանում 2011 թ. առաջին կիսամյակում կազմել է ամբողջ բնակչության 16 տոկոսը (22,9 մլն):

# Իրանը գոհ է բանակցությունները վերսկսելու ռուսական ծրագրից

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հավանություն է տվել ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի առաջարկություններին, որոնց նպատակն է վերսկսել իրանական միջուկային ծրագրին նվիրված բանակցությունները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով Ահմադինեժադի դիվանատան հայտարարությունը:

Սերգեյ Լավրովը իր առաջարկություններով հանդես էր եկել Վաշինգտոնում: Ռուս նախարարը հայտարարել էր, որ Իրանի մեկուսացումը տանում է փակուղի, մինչդեռ հակամարտության լուծման միակ միջոցը համագործակցության բանակցությունների վերսկսումն է:

«Լավրովի ծրագիրը» նախատեսում է Իրանի եւ ՄԱԳԱՏԷ-ի փոխգործողության աստիճանական ընդլայնում: Մասնավորապես առաջարկվում է քայլ առ քայլ մեղմացնել հակաիրանական պատժամիջոցները՝ ՄԱԳԱՏԷ-ի պահանջների կատարման դիմաց: Լավրովի կարծիքով՝ Իրանի յուրաքանչյուր կոնկրետ քայլ արժանի է խրախուսման:

Մի շարք երկրներ եւ միջազգային կազմակերպություններ կասկածներ ունեն, թե Թեհրանը խաղաղ ատոմային ծրագրի քողի տակ միջուկային զենք է մշակում: 2010-ի հունիսի 9-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն Իրանի դեմ ձեռնարկեց ընդլայնված պատժամիջոցներ (մասնավորապես զենքի մատակարարումների արգելք): Բացի դրանից, ԱՄՆ-ը արգելեց Իրան արտահանել նավթամթերք, իսկ Եվրամիությունն արգելք դրեց ներդրումների, տեխնիկական համագործակցության եւ այն սարքավորումների մատակարարման վրա, որոնք կարող են օգտագործվել միջուկային ծրագրերում:

2010-ի հունիսի 21-ին Իրանն արգելեց ՄԱԳԱՏԷ-ի երկու տեսուչների մուտքը երկիր: Մի քանի օր անց Ահմադինեժադը հայտարարեց, որ Իրանի միջուկային ծրագրին նվիրված բոլոր բանակցությունները դադարեցվում են:

# Յուշչենկոն ցուցմունքներ է տվել Տիմոշենկոյի գործով

Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յուշչենկոն երեկ Կիեւի շրջանային դատարան է ներկայացել նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի գործով վկայական ցուցմունքներ տալու: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Ավելի վաղ նախկին նախագահը հրաժարվել էր հանդես գալ դատարանում, ասելով, որ ինքը արձակուրդում է: Սակայն դատարանը դա համարել էր անհարգելի պատճառ եւ Յուշչենկոյից կրկին պահանջել էր ներկայանալ: Օգոստոսի 15-ին դատարանը վճռել էր հարկադիր կարգով նրան բերել էներգետիկ անվտանգության գծով նախագահի նախկին լիազոր Բոգդան Սոկոլովսկուն: Օգոստոսի 17-ին նա դատարան ներկայացավ Յանուկովիչի հետ:

Ինքը՝ Յուլիա Տիմոշենկոն, օգոստոսի 5-ից քննչական մեկուսարանում է: Նրան մեղադրում են Ռուսաստանի հետ գազային պայմանագրեր կնքելիս պաշտոնեական լիազորությունները վերազանցած լինելու մեջ: Նախկին վարչապետը մերժում է իրեն հասցեագրված մեղադրանքները, քրեական գործն անվանելով երկրի նոր իշխանությունների նախաձեռնած քաղաքական հետապնդում: Ավելի վաղ Վիկտոր Յուշչենկոն հայտարարել էր, թե պատրաստ է պաշտպան կանգնել Տիմոշենկոյին, եթե պարզվի, որ նրան դատել են անարդարացիորեն:

Պ. Ք.

# Հարիրիի սպանության մեջ մեղադրվում են «Հզբոլլահի» 4 անդամներ

Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը հետաքննող հատուկ դատարանը երեկ հրապարակել է իր մեղադրական եզրակացությունը, որը զբաղեցնում է 47 էջ: Այդ մասին հաղորդում է «Ալ Արաբիա» հեռուստաալիքը:

Դատարանը սպանության մեջ մեղադրում է «Հզբոլլահ» շիա արմատական խմբավորման 4 բարձրաստիճան ներկայացուցիչների: Դրանք են Մուստաֆա Բադրադդինը, Հուսեյն Անայսին, Ասադ Սաբրան եւ Սալիմ Այյաշը: Բադրադդինը եւ Այյաշը մեղադրվում են պայթուցիկ նյութերով ահաբեկչություն իրականացնելու մեջ, իսկ Անայսին եւ Սաբրան՝ ահաբեկչության կատարմանն ուղղված հանցավոր գործարքի մեջ: Դատարանը Լիբանանի դատախազությանը փոխանցել է ամբաստանյալների ձերբակալման կարգադրություններ, սակայն չի հաջողվել նրանց ձերբակալել:

«Հզբոլլահի» ղեկավարությունը նախազգուշացրել է, որ թույլ չի տա կալանավորել խմբավորման անդամներից որեւէ մեկին: «Ֆիգարո» թերթի կայքը մեջբերում է դատարանի այն պնդումը, թե բավականաչափ փաստեր են հավաքված հիշյալ մեղադրանքները ներկայացնելու եւ դատը վարելու համար: Դատախազ Դանիել Բելմարը նշել է, որ մեղադրական եզրակացության հրապարակումը հասարակայնությանը եւ Հարիրիի ու մյուս 22 զոհերի ազգականներին կծանոթացնի քննության ընթացքում հավաքված փաստերին: Նրա խոսքերով՝ հանցագործության ամբողջական պատկերը հնարավոր կլինի վերականգնել միայն թափանցիկ դատական լսումների ժամանակ:



# Սարկոզին եւ Մերկելը առաջարկում են ստեղծել եվրոգոտու կառավարություն

**Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հանդես են եկել եվրոգոտու տնտեսական կառավարություն ստեղծելու առաջարկությամբ: Որոշումն ընդունվել է Ելիսեյան պալատում օգոստոսի 16-ին նրանց անցկացրած բանակցություններից հետո, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Իշխանության նոր մարմինը պետք է միավորի եվրոգոտու բոլոր 17 երկրները: Այնտեղ կընդգրկվեն պետությունների ու կառավարությունների ղեկավարները, իսկ նախագահի պաշտոնը կզբաղեցնի Եվրոպայի խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպեյը: Ենթադրվում է, որ տնտեսական կառավարությունը նիստերի կհավաքվի տարեկան 2 անգամ:**

**Ֆրանսիան եւ Գերմանիան գտնում են, որ եվրոգոտու «ծայրամասային» տնտեսությունները պարտավոր են վարել բյուջետային ծախսերի կրճատման կոշտ քաղաքականություն: Բացի դրանից, Փարիզը եւ Բեռլինը պահանջում են, որ եվրոգոտու մասնակիցները ավելի շատ փոխգործակցեն ֆինանսական քաղաքականության ոլորտում: Սարկոզիի եւ Մերկելի կարծիքով, տնտեսական կառավարությունը կօգնի այդ նպատակների իրականացմանը:**

**Ներկայումս եվրոգոտու ղեկավարությունն իրականացնում է Եվրոխումբը, որի մեջ մտնում են ընկերակցության բոլոր երկրների ֆինանսների նախարարները:**



**Ելիսեյան պալատում կայացած հանդիպումից հետո երկու երկրների ղեկավարները նաեւ հայտարարել են, որ անհրաժեշտ է Եվրամիությունում ընդհանուր հարկեր սահմանել ֆինանսական գործառնությունների վրա: Գերմանիայի եւ Ֆրանսիայի ֆինանսների նախարարները սեպտեմբերին այս կապակցությամբ կներկայացնեն իրենց առաջարկությունները:**

# Մորալես. «ԱՄՆ-ը շուտով կդառնա Չինաստանի գաղութը»

**Չինաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում Բոլիվիայի նախագահ Էվո Մորալեսը վստահություն է հայտնել, որ ՉԺՀ տնտեսական հաջողությունները ԱՄՆ-ին կստիպեն մոտ ժամանակներս այդ երկրին միանալ որպես գաղութ:**

**«Չինաստանը աշխարհի ամենամեծ երկիրն է, եւ ես վստահ եմ, որ մոտ ժամանակներս Միացյալ Նահանգները կդառնան նրա գաղութը», հայտարարել է Մորալեսը, որի խոսքերը մեջբերում է մեքսիկական Notimex գործակալությունը:**

**Այցի օրերին ստորագրվել են մի շարք երկկողմ համաձայնագրեր: Բոլիվիայի նախագահը եղել է չինական այն ձեռնարկությունում, որտեղ կառուցվում է բոլիվիական առաջին արբանյակը՝ Tupac Katari-ն: Այդպես էին անվանում հնդկացիների առաջնորդին, որը 18-րդ դարում ապստամբություն կազմակերպեց իսպանացի գաղութարարների դեմ: Նախատեսվում է արբանյակն ուղեծիր դուրս բերել 2013-ի վերջերին:**

**2006-ից նախագահող Մորալեսը անցյալում եւս հանդես է եկել հակաամերիկյան հայտարարություններով: Այսպես, 2009-ին նա խստիվ քննադատեց Կոլումբիայում ամերիկյան ռազմակայանների ստեղծումը եւ Վաշինգտոնին խոստացավ սարքել «երկրորդ Վիետնամ», եթե ԱՄՆ-ը ագրեսիվ ռազմական քաղաքականություն վարի Լատինական Ամերիկայում:**

# Իսրայելից պահանջում են Թուրքիայից ներողություն խնդրել հանուն ԱՄՆ Մերձավորարեւելյան շահերի

**ԱՄՆ պետդեպարտամենտը օրերս իսրայելցի դիվանագետներին հասկացրել է, որ իսրայելա-թուրքական հարաբերությունների հետագա վատթարացումը վնաս կպատճառի Մերձավոր Արեւելքում Վաշինգտոնի շահերին: Ամերիկացիներն Իսրայելից պահանջում են հնարավորինս շուտ հաղթահարել ճգնաժամը եւ, եթե անհրաժեշտ է, Թուրքիայից ներողություն խնդրել «Մավի Մարմարա» նավի վրա պաղեստինամետ 9 ակտիվիստների սպանության համար:**

**Այդ մասին մասնավորապես խոսել է պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Օգոստոսի 17-ին «Եդիոտ Ահրոնոտ» թերթը գրեց, որ ԱՄՆ-ը ջանում է Թուրքիայի աջակցությունը ստանալ Սիրիայի հարցում եւ Իսրայելին ստիպել ներողություն խնդրել Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարությունից: Այդ նպատակով ուժեղացվում է ճնշումը Իսրայելի ղեկավարության վրա: Որոշ տեղեկությունների համաձայն, ամերիկացի դիվանագետները իսրայելցի գործընկերներին նույնիսկ հայտնել են, թե դժվար կլինի «բարեկամ երկրներին» համոզել պաղեստինցիներին չպաշտպանել ՄԱԿ-ում, քանի որ Իսրայելը համառում է ներողություն խնդրել Թուրքիայից:**

**Իսրայելի կառավարությունը մինչեւ օրս որոշում չի ընդունել ներողություն խնդրելու կապակցությամբ: Պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը, նախարար Դան Մերիդորը եւ ազգային անվտանգության խորհրդի ղեկավար Յաակով Ամիդրորը առաջարկում են Թուրքիայից ներողություն խնդրել, որպեսզի կանխվեն զինվորականներին դատական հետապնդման ենթարկելու փորձերը: Ներողություն խնդրելուն կտրականապես դեմ են արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը, ներքգործնախարար Էլի Իշայը, նախարարներ Մոշե Յաալոնը եւ Բենի Բեգինը:**

Պ. Ք.

# Մշակույթ

## «Երկիր» միության գիտահետազոտական արշավախումբը ուսումնասիրություններ է կատարել Համշենում եւ Դերսիմում

«Երկիր» միության «Վան» նախագծի շրջանակներում ձեւավորված գիտահետազոտական արշավախումբը 2011թ. հուլիսի 18-ից օգոստոսի 4-ը այցելել եւ ուսումնասիրություններ է կատարել Համշենի, Դերսիմի, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի մի շարք այլ բնակավայրերում: Արշավախմբի անդամ երաժիշտները («Վան» նախագիծ» խումբ, գեղարվեստական ղեկավար՝ Նորայր Քարտաշյան) գիտարշավի շրջանակներում մասնակցել են Արգուվանի երաժշտական փառատոնին (հուլիսի 24), ինչպես նաեւ Մնձուրի բնության եւ մշակույթի փառատոնին՝ ելույթ ունենալով Դերսիմի Օվաջըկ (հուլիսի 29) եւ Խոզաթ (հուլիսի 30) քաղաքներում կայացած համերգներին:



Զուգահեռաբար, արշավախմբի կազմում ընդգրկված առանձին հետազոտական խումբը, ազգագրագետ Հրանուշ Խառատյանի եւ արեւելագետ Անուշ Հովհաննիսյանի մասնակցությամբ, դաշտային ազգագրական հետազոտություններ է կատարել դերսիմցիների շրջանում՝ հավաքելով ազգագրական բնույթի հարուստ նյութ:

Արշավախմբի դաշտային հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել են տեղական բնակչության ավանդական նվագարանները, տեսագրվել են ավանդական երգերն ու պարերը, տեսագրվել եւ գրի են առնվել վիպական բանարվեստի տեսակների (առասպել, հեքիաթ, ավանդազրույց, գուշակություն, անեծք եւ օրհնանք, աղոթք եւ այլն) մի շարք նմուշներ, տեսագրվել եւ գրի են առնվել էթնիկ ոչ նյութական մշակութային ժառանգության այլ դրսեւորումներ:

Գիտարշավն իրականացվել է Ֆրանսիայի Ռոն-Ալպ շրջանի իշխանությունների եւ «Ֆինեկո» կազմակերպության (www.fineco.fr) ֆինանսական աջակցությամբ, ինչպես նաեւ թուրքական «Անադոլու կուլտուր» հիմնադրամի կազմակերպչական օժանդակությամբ:

«Երկիր» միության կողմից իրականացվող «Վան» նախագծի հիմնական նպատակներն են.

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ Հայկական բարձրավանդակի եւ Սեւծովյան ավազանի տարածքում ապրող ծագումով հայ բնակչության բնիկ ինքնության պահպանմանը նպաստելը,

Հայկական բարձրավանդակի եւ Սեւծովյան ավազանի տարածքում ապրող էթնիկ խմբերի եւ Հայաստանի բնակչության միջեւ միջմշակութային կապերի հաստատումն ու զարգացումը, համատեղ արտահայտվելու հնարավորությունների ստեղծումը,

Հայկական բարձրավանդակի եւ Սեւծովյան ավազանի ավանդական երաժշտության եւ ոչ նյութական մշակութային ժառանգության այլ ճյուղերի ուսումնասիրությունը, դրանում առկա հայկական շերտի վերհանումը,

Հայկական բարձրավանդակի եւ Սեւծովյան ավազանի տարածքի հայկական ավանդական ժառանգության ներկայացմանն ու պրոպագանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

## Նոր հրատարակություն

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել Արմեն Մալխասյանի «Սուրբ Էջմիածնի մետաղե կրկնակազմերը» գիրքը, որտեղ ներկայացված են Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում պահվող եւ ցուցադրվող, 15-20-րդ դարերում պատրաստված մետաղե կրկնակազմերը:

Կրկնակազմերի մեծ մասն ունի թվակիր արձանագրություններ, որոնք կարեւոր աղբյուր են հանդիսանում ինչպես հայկական կազմարվեստի եւ կազմարարական դպրոցների ուսումնասիրության, այնպես էլ հնագրության, հայոց լեզվի պատմության եւ այլ խնդիրների լուսաբանման համար: Հեղինակը արձանագրությունների շնորհիվ պարզաբանել է կրկնակազմերի հետ կապված մի շարք հանգամանքներ:

Գիրքը տպագրվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

## Ջազ տրամադրություն «Կոնվերս» բանկից

Օգոստոսի 19-ին «Շարլ Ազնավուր»-ի անվան հրապարակում «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն կկազմակերպի բացօթյա ջազ համերգ Հայաստանի պետական ջազ նվագախմբի մասնակցությամբ: Ջազ երեկոյի նպատակն է հաճելի ժամանցի կազմակերպումը զուգակցել բանկի թեժ առաջարկների ներկայացմանը:

Բանկը ջազ-երեկոյին ներկա հանդիսատեսին կներկայացնի 3 փաթեթ առաջարկ: «Շանս» ավանդատուները հնարավորություն կստանան մասնակցելու տարեկան 4 անգամ կազմակերպվող մրցանակաբաշխությանը: «Ամառ» ավանդատեսակը հնարավորություն կտա ավանդատուին ներդրման պահին ստանալու ավանդի դիմաց վճարվող տոկոսագումարները, իսկ VISA Gold, Mastercard Gold քարտերի ընտրության դեպքում, հնարավորություն կտրվի ձեռք բերել դրանք 50% զեղչով եւ աշխարհի որեւէ երկիր ուղեւորության ժամանակ անվճար ապահովագրության առաջարկով:

Հիշեցնենք, որ Կոնվերս բանկը մշտապես աջակցել է հայկական մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Բանկն իր ներդրումն է ունեցել «Սպարտակ» բալետի եւ «Աիդա» օպերաների ստեղծման գործում:

Հ. Հ.


### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը (քմ) | Շինության մակերեսը (քմ) | Մրցույթի պայմաններ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1 | 2 | 3 |
| 1 | Աբովյան փողոց հ.48/13 | Ստորգետնյա անցում | 681.1 | 652.6 | գույքի վաճառքի համար առաջարկվող նվազագույն գինը՝ 98 500 000 դրամ | մրցույթում հաղթողի միջոցների հաշվին օտարվող գույքի, ինչպես նաեւ ամբողջ ստորգետնյա անցումի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում (այդ թվում ընթացիկ) եւ պահպանում, օդափոխության կազմակերպում, աղբահանության եւ սանմաքրման աշխատանքների կազմակերպում, լուսավորության ապահովում, հասարակական զուգարանի կառուցում, կոյուղու եւ ջրագծերի անցկացում | ներդրումներ կատարել մեկ տարվա ընթացքում՝ առնվազն 255 500 000 դրամ |

Երեւան, Աբովյան փողոց թիվ 48/13 հասցեում գտնվող գույքը ծանրաբեռնված է 3-րդ անձանց վարձակալության իրավունքներով, ինչպես նաեւ առկա են փաստացի օգտագործողներ եւ մրցույթի հաղթողը կրում է դրա հետ կապված բոլոր ռիսկերը:

Մրցույթին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Մրցույթի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Մրցույթը կայանալու է 2011թ սեպտեմբերի 19-ին ժ.16.00-ին, ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ սեպտեմբերի 16-ը, ժամը 16.00-ն:

Սույնով չեղյալ է համարվում Աբովյան փողոց թիվ 48/13 հասցեի 17.08.2011թ «ԱԶԳ» օրաթերթում տրված մրցույթի հայտարարությունը:

*ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*


ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

## Խուլիո Կորտասարի պատմվածքների հայերեն առաջին թարգմանությունը



Հայաստանում Արգենտինայի Դեսպանությունը պատիվ ունի տեղեկացնելու, որ Արգենտինայի արտաքին գործերի նախարարության սահմանած «Programa Sur» (PROSUR)՝ Արգենտինյան հեղինակների թարգմանությունների աջակցման ծրագրի շրջանակներում աշխարհահռչակ արգենտինացի գրող Խուլիո Կորտասարի պատմվածքները առաջին անգամ հայերեն լեզվով թարգմանվել եւ հրատարակվել են «Անտարես» մեդիա հոլդինգ հրատարակչության կողմից: Գրքում ընդգրկված են հետեւյալ պատմվածքները. «Զբոսայգիների անվերջությունը», «Զավթված տունը», «Նամակ Փարիզում գտնվող մի օրիորդի», «Գիշերը մեջքի վրա՝ երեսնիվայր», «Կիրկե», «Մեխված դուռը», «Դեղին ծաղիկ», «Երկնքի դարպասները», «Ամառ», «Թույնը»:

Թարգմանությունը կատարել է Հասմիկ Բաղդասարյանը՝ իսպանալեզու հեղինակների ոլորտում փորձառու մասնագետ: Գունավոր նկարազարդումն իրականացրել է հայ հանրաճանաչ արվեստագետ Վահե Գասպարյանը՝ հայոց մշակույթի՝ միջազգային մակարդակով նշանավոր ցուցահանդեսների մասնակից: Պատմաշարը հրատարակված է կոշտ կազմով, 25 x 14 սմ չափսերով եւ բաղկացած է 96 էջից: Այն լույս է տեսել 500 օրինակով եւ հանձնված է վաճառքի 2011 թ.-ի մայիսից:

## «Սահման»-ը Մոսկվայի Ազգային կինոմատոգրաֆիաների ֆորումում

Հարություն Խաչատրյանի «Սահման» ֆիլմը կմասնակցի Ազգային կինոմատոգրաֆիաների 15-րդ ֆորումին, որը կանցկացվի օգոստոսի 28-ից մինչեւ սեպտեմբերի 4-ը Մոսկվայի Կրասնայա Պրեսնիայում գտնվող Կինոկենտրոնի մեծ դահլիճում:

Ազգային կինեմատոգրաֆիաների ֆորումը կազմակերպված է Կինեմատոգրաֆիստների միությունների կոնֆեդերացիայի կողմից, ԱՊՀ երկրների Միջպետական հումանիտար համագործակցության հիմնադրամի եւ Ռուսաստանի Դաշնության Պետֆիլմաֆոնդի մասնակցությամբ:

ԱՊՀ երկրների, Լատվիայի, Լիտվայի եւ Էստոնիայի ազգային կինոմատոգրաֆիաների ֆորումը անցկացնելու մասին որոշումը ընդունվել է այդ երկրների վարչապետների խորհրդի կողմից 1994 թ. դեկտեմբերի 9-ին: Ֆորումն ընդգրկված է ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության 2011 թվականի հիմնական ծրագրում:

15-րդ Ֆորումի ծրագրում ընդգրկված են հետեւյալ ֆիլմերը. «Տարածք» (Ադրբեջան), «Սահման» (Հայաստան), «Համաձայնության կանխավարկածը» (Ռուսաստան), «Կատար» (Ուզբեկիստան), «Կարմիր սնդիկ» (Էստոնիա, Ռուսաստան), «Ընտանեկան հարցեր» (Լատվիա), «Միանձնուհին» (Բելառուս), «Իսկ այնտեղ թատրոն կա» (Վրաստան, Կախի Կավսաձեի մասնակցությամբ), «Ուշացած սեր» (Ղազախստան, Նատալիա Արինբասովայի եւ Ժերար Դեպարդյեի մասնակցությամբ):

Ֆորումի սահմաններում կանցնեն ավանդական քննարկումներ եւ ավարտական «Եվրասիայի կինոարվեստը 2010-2011» կլոր սեղան-քննարկումը:

Հիշեցնենք, որ Հարություն Խաչատրյանի «Սահման» ֆիլմը ներկայացված է եղել մի շարք միջազգային փառատոներում եւ արժանացել Անթալիայի միջազգային փառատոնի Գրան պրի մրցանակին, Սիրակուզի եւ Խիխոնի միջազգային փառատոների «Լավագույն վավերագրական ֆիլմ» մրցանակին, Իտալիայի «Կինոաստեյտ» փառատոնի Դարկո Բրատինա մրցանակին տարվա լավագույն ֆիլմի համար: 2010 թ. Ֆիլմը ստացել է FIPRESCI միջազգային կինոքննադատների ֆեդերացիայի մրցանակը շվեյցարական Ֆրիբուրի միջազգային փառատոնում: 2009 թ. «Սահմանը» բերել է իր հեղինակին ԱՊՀ եւ Բալթիական երկրների «Կինոշոկ» փառատոնի լավագույն ռեժիսոր մրցանակը :

*«Ոսկե ծիրան» փառատոնի մամուլի գրասենյակ*


### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ - ԱՇՁԲ - 24**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Պարզեցված ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու մաքսակետի արտաքին ջրամատակարարման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու մաքսակետի արտաքին ջրամատակարարման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով ստանալ անվճար հրավեր:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ք. Երևան, Մ.Խորենացու-7, 107 սենյակ հասցեով, մինչև 25.08.11թ ժամը՝ 15:00-ն, դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Պարզեցված ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներակայացրած մասնակցի հայտը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե***

# Լավագույնները կընդգրկվեն Հայաստանի հավաքականում

Համահայկական 5-րդ խաղերի ծրագրում ընդգրկված 10 մարզաձեւերից մասնագետների շրջանում առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում բասկետբոլի մրցումները: Եվ դա պայմանավորված է մի խումբ իրոք ուժեղ թիմերի առկայությամբ, որոնցում բավականին հասուն խաղ ցուցադրող բասկետբոլիստներ են հանդես գալիս: Պատահական չէ, որ հանդիպումներին ուշի ուշով հետեւում են բասկետբոլի մասնագետները: Ինչպես նշեց բասկետբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Հրաչյա Ռոստոմյանը, մարզիչները հետեւում են խաղերի ընթացքին, որոնց ավարտից հետո հնարավորություն կունենան Հայաստանի հավաքականի համար թեկնածուներ ընտրել սփյուռքահայ բասկետբոլիստներից:



ՖՈՏՈԼՈՒՐ

Ինչպես միշտ, տղամարդկանց մրցաշարում ուժեղ թիմ է ներկայացրել Համահայկական նախորդ խաղերի չեմպիոն Սոչին, որը հանդես է գալիս 2-րդ ենթախմբում: Սոչիի բասկետբոլիստներին որոշ դիմադրություն ցույց տվեց Բեյրութի թիմը, որը պարտվեց 51-83 հաշվով: Իսկ ահա Թավրիզի հետ մրցախաղում Սոչիի բասկետբոլիստների առավելությունը բացահայտ էր, որոնք հաղթեցին գերխոշոր` 101-17 հաշվով: Նույն խմբում ընդգրկված Երեւանի թիմը հաղթել է Թավրիզին (65-35), պարտվել Բեյրութի բասկետբոլիստներին (62-80):

Ուժեղ թիմ ունի նաեւ Գլենդեյլը, որը հանդես է գալիս 4-րդ ենթախմբում: Ամերիկահայ բասկետբոլիստները մեծ առավելությամբ հաղթել են Մոնրեալին (106-40), պարտության են մատնել Սալմաստի թիմին (98-79): 1-ին ենթախմբում էլ առաջատարներից մեկը Լոս Անջելեսի թիմն է, որն առավելության է հասել Հալեպի (96-78) եւ Ստեփանակերտի (95-68) նկատմամբ: Նույն ենթախմբում Թեհրանի բասկետբոլիստները պարտության են մատնել Ստեփանակերտի (76-73) եւ Հալեպի (86-62) թիմերին:

5-րդ ենթախմբում Իսֆահանի բասկետբոլիստները հաղթել են Ախալքալակի (77-40) եւ Բուենոս Այրեսի (64-59) թիմերին: Նույն թիմերի հետ մրցավեճում 2 հաղթանակ է տոնել նաեւ Կահիրեի թիմը:

6-րդ ենթախմբում առաջատարը Ստամբուլի թիմն է, որը հաղթել է Ուրմիային (75-38) եւ Փարիզին (88-33): 3-րդ ենթախմբում էլ Գլենդեյլ Մոնրոուզը պարտության է մատնել Սիդնեյի (74-67) եւ Վիեննայի (111-45) բասկետբոլիստներին:

Կանանց 11 թիմերը բաժանվել են 2 ենթախմբի: 1-ին ենթախմբում 2-ական հաղթանակ են տոնել Երեւանի, Իսֆահանի եւ Թեհրանի թիմերը: 2-րդում առաջատարներն են Գլենդեյլի եւ Շահին Շահրի բասկետբոլիստուհիները:

Երեկ Համահայկական 5-րդ խաղերում հանգստյան օր էր: Խաղերի մասնակիցներն այցելեցին Ծիծեռնակաբերդ, մեկնեցին Սեւան եւ Ծաղկաձոր, եղան Հայաստանի այլ տեսարժան վայրերում:

# Ուժեղագույնը Շուշիի եւ Երեւանի թենիսիստներն են

**Համահայկական 5-րդ խաղերում հայտնի դարձան սեղանի թենիսի մրցաշարի հաղթողները: Թիմային պայքարում տղամարդկանց մրցաշարում բոլորից հաջող հանդես եկան Շուշիի եւ Երեւանի թիմերը, որոնք էլ եզրափակիչում վիճարկեցին գլխավոր մրցանակը: Եզրափակիչ հանդիպումն աչքի ընկավ համառ պայքարով: Առաջին միավորը Շուշիի թիմին պարգեւեց Հարություն Հարությունյանը` հաղթելով Ալեքսանդր Դիարյանին: 2-րդ մրցախաղում երեւանցի Մեսրոպ Ղուկասյանին հաջողվեց հավասարեցնել հաշիվը` պարտության մատնելով Վարուժան Բաղդասարյանին: Հաջորդ երկու մրցախաղերում կողմերը կրկին մեկական հաղթանակ տոնեցին: Վճռորոշ մրցախաղում Շուշիի թիմի թենիսիստ Վարուժան Բաղդասարյանը հաղթեց Ալեքսանդր Դիարյանին ու 3-2 հաշվով հաղթանակ պարգեւեց իր թիմին: Այսպիսով, Շուշիի տղամարդկանց թիմը դարձավ Համահայկական 5-րդ խաղերի սեղանի թենիսի մրցաշարի հաղթող: 3-րդ տեղը զբաղեցրեց Գյումրիի թիմը:**

**Կանանց մրցաշարում լավագույնը Երեւանի թիմն էր, որը վճռական մենամարտում հաղթեց Ստեփանակերտի թենիսիստուհիներին: Բրոնզե մեդալները նվաճեցին Թբիլիսիի թիմի թենիսիստուհիները:**

# Ծանրորդները ձախողվեցին

**Չինաստանի Շենժեն քաղաքում ընթացող Ունիվերսիադայում ծանրամարտի մրցումներում առաջին ոսկե մեդալը նվաճելուց հետո մեր ծանրորդներից սպասելիքներն ավելի մեծացան: Ցավոք Աղասի Աղասյանից հետո մրցահարթակ դուրս եկած մեր 3 ծանրորդներն էլ ձախողվեցին: Նրանք ոչ միայն մրցանակակիր չդարձան, այլեւ երկուսը չկարողացան հաղթահարել նախնական քաշը:**

**Մինչեւ 85 կգ քաշայինների մրցավեճում Արամ Անդրիկյանը պոկում վարժությունում 0 ստացավ` չկարողանալով բարձրացնել 150 կգ-անոց ծանրաձողը: Հրում վարժությանը նա այլեւս չմասնակցեց: Քաշային այս կարգում չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Ռինաս Կիրեեւը` 365 կգ (165+200): 2-րդ տեղը գրավեց չինացի Ժանգ Չիշոնգը` 353 կգ (163+190): Բրոնզե մեդալակիր դարձավ կորեացի Հո Յուն` 351 կգ (158+193):**

**Մինչեւ 94 կգ քաշային կարգում մեր երկու ծանրորդներն էլ դուրս մնացին մեդալների համար մղվող պայքարից: Յուրի Վարդանյանի որդին` Նորայրը միայն 3-րդ մոտեցմամբ պոկում վարժությունում բարձրացրեց 155 կգ-ը, սակայն վնասվածքի պատճառով չշարունակեց մրցումները: Վարդան Դավթյանը պոկում վարժության առաջին մոտեցմամբ բարձրացնելով 165 կգ, հաջորդ երկու փորձերի ժամանակ չկարողացավ իրեն ենթարկել 170 կգ ծանրությունը: Իսկ հրում վարժությունում նա 0 ստացավ` չբարձրացնելով նախնական 196 կգ ծանրությունը:**

**Քաշային այս կարգում չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Անդրեյ Դեմանովը, որը երկամարտում ցույց տվեց 390 կգ (177+213) արդյունք: 387 կգ (180+207) արդյունքով արծաթե մեդալը նվաճեց լիտվացի Դիզբալիս Աուրիմասը: Բրոնզե պարգեւին արժանացավ թուրք Արաս Իբրահիմը` 373 կգ (170+203):**

# «Վիկտորիան» ուղեգրի լուրջ հայտ ներկայացրեց

**Կայացան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի առաջին հանդիպումները: Հաղթարշավն է շարունակում Պլզենի «Վիկտորիան», որը պայքարից դուրս էր մղել «Փյունիկին»` հաղթելով խոշոր հաշիվներով: Չեխիայի չեմպիոնը գործնականում լուծեց խմբային փուլի ուղեգրի նվաճման հարցը` Կոպենհագենում 3-1 հաշվով հաղթելով տեղի համանուն թիմին:**

**Անհաջողության մատնվեց Ռուբինի «Կազանը», որը Լիոնում 1-3 հաշվով պարտվեց տեղի համանուն թիմին: Բելառուսի չեմպիոն ԲԱՏԷ-ին սեփական հարկի տակ չհաջողվեց առավելության հասնել ավստրիական «Շտուրմի» նկատմամբ: Գրանցվեց ոչ-ոքի` 1-1:**

**Լոնդոնի «Արսենալը» խաղասկզբում Ուոլկոտի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց իտալական «Ուդինեզեին»: Այս դիմակայությունում ուղեգրի հարցը կվճռվի պատասխան խաղում: Մարտական ոչ-ոքի (2-2) գրանցվեց հոլանդական «Տվենտեի» եւ պորտուգալական «Բենֆիկայի» մրցավեճում: Առաջին խաղակեսում «Բենֆիկան» հաղթում էր 2-1 հաշվով: Խաղավարտից 10 րոպե առաջ Ռուիսին հաջողվեց թիմին փրկել պարտությունից:**

# «Էրեբունին» դուրս մնաց հետագա պայքարից

Կիպրոսում ավարտվեց ֆուտզալի ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլի մրցաշարը: G խմբում հանդես եկող «Էրեբունին» ավարտական խաղում 2-8 հաշվով զիջեց Կիպրոսի «Օմոնիային» ու դուրս մնաց հետագա պայքարից: Մեր թիմից գոլերը խփեցին Արմեն Գուլամբարյանն ու Արմեն Քոսայանը:

Տուրի մյուս խաղում Փարիզի «Սպորտինգը» 9-5 հաշվով հաղթեց ալբանական «Ֆլյամուրտարիին»: G խմբից հաջորդ փուլի միակ ուղեգիրը բաժին հասավ Կիպրոսի «Օմոնիային», որը հաղթեց իր մրցակիցներին:

# Զիջեցին իրանցի պատանիներին

Հանքավանում ուսումնամարզական հավաք անցկացնող ֆուտբոլի Հայաստանի եւ Իրանի մինչեւ 16 տարեկանների պատանեկան հավաքականներն ընկերական 2 հանդիպումներում փորձեցին ուժերը: Առաջին խաղն ավարտվեց ոչ-ոքի` 2-2: Մեր թիմից գոլերի հեղինակներ դարձան Էդուարդ Ավագյանն ու Վարդան Խաչատրյանը:

2-րդ խաղում մեր թիմը Էդուարդ Ավագյանի եւ Վահան Աղլոյանի խփած գոլերի շնորհիվ առաջին խաղակեսում առջեւում էր 2-1 հաշվով: Սակայն ընդմիջումից հետո հյուրերին հաջողվեց 2 գոլ խփել ու հանդիպումը շահել 3-2 հաշվով:

## ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Հայ ըմբիշների հաջող ավարտը

**Լեհաստանում ավարտված ըմբշամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում հիանալի հանդես եկավ Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը: Գլխավոր մարզիչ Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ մրցագոտի դուրս եկած հայ 9 ըմբիշներից 6-ը դարձան մրցանակակիրներ:**

**Բոլորից հաջող հանդես եկավ Սարգիս Քոչարյանը, որը մինչեւ 69 կգ քաշային կարգում հռչակվեց Եվրոպայի չեմպիոն: Եզրափակիչում Սարգիսը հաղթեց ռուսաստանցի Դմիտրի Կեսոպուլոյին:**

**Եզրափակիչ էին մտել նաեւ Ալբերտ Վարդանյանը (46 կգ) եւ Կարեն Ասլանյանը (54 կգ), որոնք վճռորոշ գոտեմարտերում զիջելով ադրբեջանցիներ Քարիմ Ջաֆարովին եւ Մուրադ Մամադովին, բավարարվեցին արծաթե մեդալով: Բրոնզե մեդալներ նվաճեցին Գեւորգ Ղարիբյանը (50 կգ), Արմեն Հակոբյանը (63 կգ) եւ Կարեն Աբգարյանը (85 կգ):**

# Ավետիք Գրիգորյանը շարունակեց հաղթարշավը

**Համաշխարհային 26-րդ Ունիվերսիադայի շախմատի մրցաշարի 4-րդ տուրն էլ հաղթական էր Ավետիք Գրիգորյանի համար: 2010-ի Հայաստանի չեմպիոնը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց` առավելության հասնելով եգիպտացի գրոսմայստեր Ահմեդ Ադլիի նկատմամբ:**



**4 տուրից հետո Ավետիք Գրիգորյանը չինացի Վան Հաոյի հետ 100 տոկոսանոց արդյունքով գլխավորում է աղյուսակը: Վերջինս հաղթեց Վասիլի Պապինին:**

**3,5 միավորով 3-րդ հորիզոնականում է Զավեն Անդրեասյանը, որը հաղթեց միջազգային վարպետ Օլիվեր Կուրմանին: Տուրը հաղթական էր նաեւ Հայաստանի 3-րդ ներկայացուցչի` Հրանտ Մելքումյանի համար, որը սպիտակներով պարտության մատնեց Ալվարո Վալդեսին: Մելքումյանն ունի 2,5 միավոր:**

**Այսօր կայանալիք 5-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի երկու առաջատարների` Ավետիք Գրիգորյանի եւ Վան Հաոյի մրցավեճը, որում հայ շախմատիստը կխաղա սեւ խաղաքարերով: Զավեն Անդրեասյանի մրցակիցը կլինի Լի Չաոն, իսկ Մելքումյանը կմրցի Մարիան Յուրչիկի հետ:**

**Կանանց մրցաշարում Աննա Հայրապետյանը հաղթելով Ֆելիսա Տրանսենոյին, վաստակեց 2,5 միավոր եւ ընթանում է 22-րդ տեղում: Ռուսաստանը ներկայացնող միջազգային վարպետ Կարինա Համբարձումովան եւս վաստակել է 2,5 միավոր: Նա պարտվեց Նինո Բացիաշվիլուն: Հետաքրքրական է, որ 5-րդ տուրում Աննա Հայրապետյանը մրցելու է Համբարձումովայի հետ:**

# Սուսաննա Գաբոյանի արդյունքը լավագույնն է

Համահայկական 5-րդ խաղերի շախմատի մրցաշարում կայացել է 6 տուր: Տղամարդկանց մրցաշարում 5,5 միավորով առաջատարը երեւանցի Ռաֆայել Բակունցն է: 2193 անհատական գործակից ունեցող շախմատիստը հաղթանակներ է տոնել Արտյոմ Իագուլյանի, Ազատ Թավաքալյանի, Կարեն Հովհաննիսյանի, Մարկ Բասենցյանի եւ Մանուել Պետրոսյանի նկատմամբ: Առայժմ միայն գորիսցի Վարդան Քարամյանին է հաջողվել կես միավոր վաստակել Բակունցի հետ պարտիայում:

5-ական միավորով առաջատարին հետապնդում են Արամ Պլուզյանը, Զոհրակ Ապրեսյանը, Ազատ Թավաքալյանը, Մանուել Պետրոսյանն ու Գոռ Վիրաբյանը:

Կանանց մրցաշարում գերազանց է հանդես գալիս երեւանցի Սուսաննա Գաբոյանը` հաղթելով բոլոր 6 պարտիաներում: Նա առավելության է հասել Անի Հովհաննիսյանի, Լիլիթ Հակոբյանի, Անի Սարուխանյանի, Դիանա Մնացականյանի, Լիանա Ավոյանի եւ Հասմիկ Ղամբարյանի նկատմամբ: 5-ական միավորով առաջատարին հետապնդում են Հասմիկ Ղամբարյանն ու Սվետլանա Միրզաբեկյանը:

# Լեւոն Պետրոսյանը Կիպրոսի մրցաշարի ուղեգիր նվաճեց

Բաթումում անցկացվեց համաշխարհային նարդու ընկերակցության եւ Play-65 համացանցային կայքի համատեղ կազմակերպված մարզաձեւի եվրոպական 9 մրցաշարերից 5-րդը: Ինչպես տեղեկացանք համաշխարհային նարդու ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ա. Մուրադյանից, մրցաշարին մասնակցեցին 5 հայ նարդիստներ: Նրանցից գերազանց հանդես եկավ մեր հանրահայտ շախմատային գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանի հայրը` Լեւոնը, որը տոնելով 6 անընդմեջ հաղթանակ, դարձավ մրցաշարի հաղթող: Լեւոն Պետրոսյանն իրավունք ստացավ մասնակցելու դեկտեմբերի 5-7-ը Կիպրոսում կայանալիք եզրափակիչ փուլին, որտեղ հանդես են գալու 24 ուժեղագույն նարդիստները:

Նշենք, որ Լեւոն Պետրոսյանը 2009-ի աշխարհի թիմային առաջնության հաղթող է, կրում է ազգային վարպետի կոչում, արդեն լրացրել է միջազգային վարպետի կոչմանն արժանանալու նորմաները:

# Էլինան չարդարացրեց սպասելիքները

**Դոնի Ռոստովում ավարտվեց կանանց շախմատի Գրան պրիի 1-ին փուլը, որի 12 մասնակիցների թվում էր Էլինա Դանիելյանը: Ցավոք Էլինան իր հնարավորություններից ցածր հանդես եկավ: 11 հնարավորից վաստակելով 5 միավոր, նա 8-9-րդ տեղերը բաժանեց Անտոանետա Ստեֆանովայի հետ: Էլինան ընդամենը 3 հաղթանակ տոնեց` պարտության մատնելով Ալիսա Գալյամովային, Եկատերինա Կովալեւսկայային եւ Ալեքսանդրա Կոստենյուկին: Աննա Մուզիչուկի, Տատյանա եւ Նադեժդա Կոսինցեւաների եւ Համպի Կոներուի հետ պարտիաներում հայ շախմատիստուհին հաշտություն կնքեց: 4 պարտիաներում Էլինա Դանիելյանը պարտվեց Հոու Յիֆանին, Կատերինա Լահնոյին, Անտուանետա Ստեֆանովային եւ Ռուան Լուֆեյին:**

**Մրցաշարում իրեն հիանալի դրսեւորեց աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը` 11 հնարավորից վաստակելով 8 միավոր: Նա միակ պարտություն կրեց 7 միավորով 2-րդ տեղը գրաված Կատերինա Լահնոյից: 3-րդ տեղը 6,5 միավորով գրավեց Աննա Մուզիչուկը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

